

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՍԴՅԿ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ

Վերջին օրերին մամուլում լոյս են տեսնում հրապարակումներ, որոնք հիմնուած են աննշտութիւնների եւ ենթադրութիւնների վրայ, չեն համապատասխանում իրականութեանը եւ միտում են տարակուսանք առաջացնելու ժողովրդի մէջ:

Սյս առումով՝ յայտարարում ենք  
 1. ՄԴԿ 123 ամեայ կուսակցութիւն է, որ իր ամբողջ պատմութեան ընթացքում գործել է եւ այսօր էլ կը շարունակի գործել ինքնուրոյն: Որպէս այդպիսին, մենք հանդիպում ենք եւ խորհրդակցութիւններ կ'ունենանք ոչ միայն մեզ դաշնակից կուսակցութիւնների, կազմակերպութիւնների եւ անհատների, այլ նաեւ նրանց, ում հետ մենք ունենք յստակ տարակարծութիւններ՝ առանց զիջելու մեր սկզբունքներին:

2. Հաւատարիմ լինելով իր գաղափարախօսութեանը՝ ՄԴԿ-ն միշտ եղել է սկզբունքային իր դիրքորոշումների մէջ:

3. ՄԴԿ-ն առաջնորդում է միայն հաւաքական դեկալարութեան հիմունքներով եւ իր քաղաքական գիծը նշում է համագումարներով:

4. Վերջերս կայացած ՄԴԿ 19-րդ Համագումարը հաստատեց Կուսակցութեան հայաստանակեցրոն լինելու հանգամանքը ու յստակեցրեց, որ ՄԴԿ-ն պիտի շարունակի գործել ընդդիմադիր դաշտում, իր համախոհների հետ միասին, մինչեւ այն պահը, երբ երկրում ազատ չեն արձակուել բոլոր քաղաքականութիւնները եւ չեն հաստատուել օրինակաւորութիւնը, ժողովրդավարութիւնը ու սահմանադրական կարգը:

Հետեւաբար, Հայաստանի եւ Սփիւռքի մեր ժողովրդին յայտարարում ենք, որ ՄԴԿ-ի քաղաքական ուղղութիւնը պայմանաւորուած չէ անհատներով, եւ մենք կը շարունակենք հաւատարիմ մնալ Համագումարի որոշումներին:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան  
 Կեդրոնական Վարչութիւն  
 Ք. Երեւան, Նոյեմբեր 4, 2009

## ՄԱՍՆՈՅ ԶԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

28 Հոկտեմբեր 2009-ին, ՀՅԴ Բիւրոյի Երեւանի «Բրիտանիա Միֆայելեան» կեդրոնին մէջ տեղի ունեցաւ ՄԴԿ, ՌԱԿ եւ ՀՅԴ միջկուսակցական բարձրագոյն մակարդակի հանդիպում: Հանդիպումին մասնակցեցան Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան ատենապետ Սեդրակ Անէմեանը, Ռամկավար Ազատական Կուսակցութեան Կեդրոնական Վարչութեան ատենապետ Մայի Խարապեանը եւ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Բիւրոյի ներկայացուցիչ Հրանտ Մարգարեանը:

Փոխադարձ ըմբռնումի մթնոլորտի մէջ կայացած հանդիպումի ընթացքին քննարկուեցան Հայաստան-Թուրքիա յարաբերութիւնները եւ ընդհանրապէս հայութիւնը յուզող այլ հարցեր:

ՄԴԿ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ  
 ՀՅԴ ԲԻՒՐՈ  
 ՌԱԿ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

## ՇԱՐԼ ԱՁՆԱԴՈՒՐ ԹՈՒՐՔԻԱՅԵՆ ՊԱՅԱՆՁԱԾ Է ԶԱՅԿԱԿԱՆ ԶՈՂԵՐԸ

Փրանսահայ նշանաւոր երգիչ եւ Զուլիցերիոյ մէջ Հայաստանի նորանշանակ դեսպան Շարլ Ազնաւուր իտալական հեռատեսիլի ընկերութիւններէն մէկու եթերով, հանդէս եկած է Թուրքիայէն հողաչին պահանջներով, կը տեղեկացնէ թրքական Հիւրըրիչէթ թերթը:

Համերգներ ունենալու համար իտալիա գտնուող աշխարհահռչակ երգիչը իտալական RAI 3 հեռատեսիլի լիւրտիւր իր գոհունակութիւնը յայտնած է Հոկտեմբեր 10-ին Զիւրիխի մէջ ստորագրուած՝ հայ-թրքական արձանագրութիւններուն կապակցութեամբ ու աւելցուցած. «1924

թուականին, երբ ես աշխարհ եկայ, հայերուն խօսք տուած էին հողերը վերադարձնել, ինչ որ դեռ չէ իրականացած: Ես դարձեալ 85 տարի չեմ կրնար սպասել:

«1924 թուականին Ստալինը խօսք տուած էր, որ հայերուն կը վերադարձուի էրզրումը, Երզնկան, Աղբըն, Սիվասը (Սեբաստիա), Էլազըղը (Նարբեթ), Դիարբեքիը (Տիգրանակերտ), Բիթլիսը, Սիւրիթը, Մուշը, Վանը եւ Հաքարին: Սեւրի համաձայնագրով ալ «Ուիլսոնի Հայաստանը» կը ներառէր նաեւ Տրապիզոնի, էրզրումի, Վանի եւ Բիթլիսի նահանգները», ըսած է Ազնաւուր:

## ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՄԱՍՆԱԿԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ԳՈՆԿՐԵՍԸ ԿԸ ՊԱՇՏՊԱՆԵ ՆԻԿՈՒ ՓԱՇԻՆԵԱՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԹԻՒՆԸ

Հայ Ազգային Գոնկրէսի քաղաքական խորհուրդը որոշած է պաշտպանել «Հայկական Ժամանակ» օրաթերթի գլխաւոր խմբագիր Նիկոլ Փաշինեանի թեկնածութիւնը, Հայաստանի Խորհրդարանի թիւ 10 ընտրատարածքի մասնակի ընտրութիւններուն: Այդ աթոռը թափուր մնացած էր Խաչատուր Սուքիասեանի՝ մանտաղէն հրաժարելէն ետք:

Փաշինեան քաղաքական բանտարկեալ է եւ իր դատավարութիւնը այսօրեւրոն կ'ընթանայ Երեւանի կեդրոն եւ Նորք-Մարաշ համայնքներու ընդհանուր իրաւասութեան դատարանէն ներս:

«Հայ Ազգային Գոնկրէսը յայտարարում է, որ պաշտպանելու է «Հայկական Ժամանակ» թերթի գլխաւոր խմբագիր, քաղբանտարկեալ Նիկոլ Փաշինեանին՝ որպէս Ազգային Ժողովի պատգամաւորի թեկնածու՝ ամէն ինչ անելու է նրա յաղթանակի համար», - լրագրողներուն յայտարարած է Գոնկրէսի համակարգող Լեւոն Զուրաբեան:

«Եթէ սա լինէր մանտաղի համար պաշար, մենք, բնականաբար, նման պաշարի մէջ չէինք մտնի», - աւելցուցած է ան: - «Բայց սա մենք դիտարկում ենք որպէս գործիք մեր քաղբանտարկ-



Նիկոլ Փաշինեան

եալ ընկերոջ իրաւունքների վերականգնման համար: Սա մենք դիտարկում ենք որպէս գործիք՝ հասարակութեան ուշադրութիւնը նորից կենտրոնացնելու քաղբանտարկեալների խնդիրների վրայ»:

Զուրաբեան նաեւ ըսած է թէ, իրենք վստահ են, որ իշխանութիւնները պիտի կիրառեն ընտրակեդիքներու ամբողջ պաշարը, ինչ որ սակայն, չի նշանակեր, որ իրենք չպէտք է մտնեն այդ պաշարի մէջ. - «Ամէն ինչ անելու ենք յաղթանակի համար, կեդրոնացնելու ենք Գոնկրէսի բոլոր ռեսուրսները այս ուղղութեամբ, պաշարելու ենք մինչեւ վերջ: Բայց որեւէ իլլուզիա չունենք, որ այս իշխանութիւնները ընդունակ են ազնիւ պաշարի»:

## ԱՐԿԱԴԻ ՂՈՒԿԱՍԵԱՆԻ ԱՅՐԸ ՓԱՍՏԻՆԱՅԻ ԶՆՉԱԿԵԱՆ ԿԵԴՐՈՆ



Քանատա եւ Նիւ Եորք կատարած իր այցելութիւններէն ետք այս օրերուն Հարաւային Գալիֆոռնիա կը գտնուի Ղարաբաղի նախկին նախագահ տիար Արկադի Ղուկասեան: Ան հանդիպումներ կ'ունենայ տեղույս աւանդական ազգային կուսակցութիւններու եւ այլ կառույցներու հետ:

Այս այցելութիւններու ծիրէն ներս յարգելի հիւրը Ս.Գ.Հ.Կ. Կեդրոնէն ներս Երկու շաբթի Նոյեմբեր 2, 2009-ին հանդիպում մը ունեցաւ Ս.Գ.Հ.Կ.ի Արեւմտեան Ամերիկայի վարիչ Մարմնի եւ մամուլի պա-

տասխանատուներուն հետ: Իրեն կ'ընկերակցէին Հայաստան Համահայկական Հիմնադրամի Հիւսիսային Ամերիկայի վարչութեան ատենապետ՝ իրաւաբան Արա Ալիշեան եւ պատասխանատու տնօրէն՝ Սարգիս Գոթանճեան:

Յարգարժան հիւրին ողջունի խօսքով հանդէս եկաւ շրջանիս վարիչ Մարմնի ատենապետ Տօթթ. Համբիկ Սարաֆեան: Իր պատասխան ելոյթին մջ Արկադի Ղուկասեան անդրադարձաւ Հայաստան Հիմ-



ՏԵՍԱԿԵՏ

Ա. ԳԵՂԱՄԵԱՆ, Ա. ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆ, Դ.Յ.Դ.

ՈՒՆԻ՞ ՉԱՅԱՍՏԱՆ ԱՅՂՔԱՆ ՈՒԺ

ՅԱՐՈՒԹՅՆԻ ԴԱԻԻԹԵԱՆ

Ամէն անգամ որ Հայաստանի ներքին կեանքը կը գտնուի կարեւոր իրադարձութեանց սեմին, ըլլան անոնք նախագահական ընտրութիւններ թէ ժողովրդային ցասման պոռթկումի վտանգ, իշխանութիւնները կը դիմեն գլխաւոր երկու միջոցներու՝ կարենալ կացութիւնը իրենց ձեռքին պահելու համար: Մին բիրտ ուժն է, իսկ երկրորդը՝ շանթաբաժն: Եթէ առաջինի ջատագովը Ռ. Քոչարեանն էր, ապա երկրորդինը Սերժ Սարգսեանն է: Առաջինի գլխաւոր օրինակներէն կարելի է չիշխել 2004-ի ապրիլեան խժժութիւնները եւ 2008 Մարտ 1-ի ահաւոր սպանդը: Այս յօդուածի նպատակը անդրադառնալն է երկրորդ միջոցին՝ Սերժ Սարգսեանի կատարելագործած շանթաբաժնի մեթոտին:

Այդ մէկը սկսաւ շատ կանուխ, Սերժ Սարգսեանի Ազգային Անվտանգութեան եւ ներքին գործոց նախարարի պաշտօնները զբաղեցուց օրերէն: Իր ամենէն հռչակաւոր «գոհ»ներն են Արտաշէս Գեղամեանը եւ Արթուր Պաղտասարեանը: Առաջինը մի քանի անգամներ շահագործուեցաւ որպէս խաղաթուղթ, մինչեւ վերջնական փճացում եւ արժեզրկում: Երկրորդի արժեզրկումը իրականացաւ նախագահական վերջին ընտրութեանց ժամանակ, բայց անոր փճացումը Արտաշէս Գեղամեանի չափ ամբողջական չէ տակաւին: Այս երկուքին արժեզրկումը ըլլալու մեր համոզումը յայտնեցինք այս յօդուածի խորագրի իրենց անուններուն վրայ դրուած շեշտերով: Այժմ անդրադառնանք խորագրի երրորդ անունն՝ Զ.Յ.Դ.ին եւ անոր վրայ դրուած պարոլիին:

Նախ հարց տուող կրնայ ըլլալ թէ խորագրի ձեւը սխալ է, երբ անհատ անուններու կողքին կ'երեւայ կազմակերպութեան մը անունը: Կա՞մ բոլորը անհատական անուններ պէտք է ըլլային՝ Զ.Յ.Դ.ն փոխարինելով Հրանդ Մարգարեանի կամ Վահան Յովհաննիսեանի անուններով, եւ կա՞մ ալ բոլորը ըլլային կազմակերպութեանց անուններ՝ Ա. Գեղամեանն ու Ա. Պաղտասարեանը փոխարինելով Ազգային Միաբանութիւն եւ Օրինաց Երկիր անուններով: Յատակեցնենք որ խորագրի ձեւը սխալ չէ, այլ դիտարկեալ կերպով այդպէս ընտրուած: Սեր կարծիքով Ազգային Միաբանութիւն եւ Օրինաց Երկիր կուսակցութիւնները, փոխանակ ամուր գաղափարական հիմքերու վրայ զարգանալու, այնքան սերտաճած են իրենց հիմնադիրներու անհատականութեան հետ, որ դատապարտուած են չքանալու անոնց չքացումով, հետեւաբար, աւելի ճիշդ է արտայայտուիլ հիմնադիրի անունով, քան թէ անոր չկայացած կազմակերպութեան անունով:

Իրադրութիւնը բոլորովին տարբեր է Զ.Յ.Դ.ի պարագային, որ մօտ 120 տարիներէ ի վեր կը գոյատեւէ շնորհիւ իր հետապնդած գաղափարախօսութեան եւ անոր նուիրեալներուն: Եթէ խորագրի Զ.Յ.Դ.ն փոխարինած ըլլայինք Հրանդ Մարգարեանով կամ Վահան Յովհաննիսեանով, ապա փոխան պարոլի, անոնց անուններուն վրայ չէ շատ պիտի գետեղէինք: Ինչո՞ւ: Որովհետեւ երբ Քոչարեանի իշխանութեան գալով Վահան Յովհաննիսեան առանձնաձուեցաւ իր

հետ դատապարտուած բանտակից ընկերներէն ու առանց իրաւական հիմքերու բանտէն դուրս բերուելով կարգուեցաւ Ազգային ժողովի փոխ-նախագահ, դարձաւ Քոչարեան-Սարգսեան գոյգի ձեռքին խաղաթուղթ: Նոյնը պատահեցաւ Հրանդ Մարգարեանի հետ, երբ մանաւանդ Հոկտեմբեր 27-ի նախաճիրէն ետք ան դարձաւ Զ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ: Այս երկուքին միջոցաւ Քոչարեան-Սարգսեան գոյգը շանթաբաժնի տակ առաւ Զ.Յ.Դ. կազմակերպութիւնը: Հետեւաբար, խորագրի մէջ Զ.Յ.Դ.ի անունը գետեղելով Ա. Գեղամեանի եւ Ա. Պաղտասարեանի անուններու կողքին, անուան վրայ պարոլի մը աւելցնելով, մենք կ'ուզենք հարց բարձրացնել թէ Զ.Յ.Դ.ն, որպէս կայացած կազմակերպութիւն, պիտի կարենա՞յ ձերբազատուիլ Մարգարեան-Յովհաննիսեան գոյգի միջոցաւ կուսակցութեան վրայ դրուած կապանքներէն: Եթէ Զ.Յ.Դ.ն կ'առաջնորդուի ժողովրդավարական հիմունքներով, այդ ձերբազատումը անկարելի պէտք չէ ըլլայ: Թէեւ Վահան Նաւասարդեանէն մինչեւ Դրոյի եւ Հրայր Մարուխեանի օրինակները ոգեւորիչ չեն, սակայն եւ այնպէս այդ գործընթացը անյուսալի ալ չէ:

Խորագրի մէջ պարոլի գետեղումը արդիւնք է նաեւ Զ.Յ.Դ.ի սփիւռքեան եւ Հայաստանեան թեւերու Սերժ Սարգսեանի հանդէպ ցուցաբերած վերաբերմունքին, որ կը բացայայտէ կուսակցութեան ներս երկու ուղղութիւններու գոյութիւնը: Սփիւռքեան թեւը Սարգսեանին կ'արժանացնէ դաւաճան պիտակին, մինչ հայաստան թեւը, Վահան Յովհաննիսեանի բերնով կը յայտարարէ թէ հայ-թրքական ծանօթ արձանագրութիւններու նախօրեակին «Հ նախագահի ուղերձը պէտք է դառնայ ձեզ համար ուղեցոյց»: Դաւաճանի ուղերձը ինչպէ՞ս կրնայ ուղեցոյց դառնալ: Հայաստանեան թեւի կախուածութիւնը յստակ է: Կը մնայ յուսալ որ սփիւռքեան թեւի շարժումները ձեւական չըլլան:

Անհատներու եւ կուսակցութիւններու հարթակէն բարձրանալով վեր դէպի ազգային/պետական հարթակ, ինչպիսի՞ հետեւութիւններու կրնանք յանգիլ: Յատակ է, որ անձի պաշտամունքի տեսութիւնը սնանկացած տեսութիւն է իր բոլոր կործանարար հետեւանքներով: «Պետութիւնը եւ եմ» թաղանթական բացարձակ ուժի արտայայտութեան վրայէն դարեր անցած են ու ժամանակը փաստած է անոր սնանկութիւնն ու վնասակարութիւնը ի դէմս ժողովրդավարական հիմունքներով առաջնորդուող պետութիւններու արձանագրած զարգացումներուն: Այս լոյսի տակ, խղճալի կը հնչէ «Միակ տղամարդը ես եմ» քոչարեանական գաւառական արտայայտութիւնն ու վարքագիծը, որ քողածածուկ կը կիրարկուի նաեւ Սերժ Սարգսեանի կողմէ, շանթաբաժնի միջոցաւ ստրկացնելով կամ խեղդելով ժողովրդավարական ձգտումներն ու զարգացումները:

Հայաստանն ու հայութիւնը ճակատագրական եւ բախտորոշ իրադարձութեանց նախօրէին կը գտնուին: Ի՞նչ վարքագիծ պիտի որդեգրենք եւ ինչպիսի՞ իտէալներով պիտի առաջնորդուինք: Չի մոռնանք, որ իւրաքանչիւր ազգ իր ապագան կը կերտէ իր իտէալներու եւ տեսլականներու պատկերով:

ՁԷՅՄՍՅԱԿՈՒԲԱՆ

Հայաստանը Թուրքիայի հետ չի քննարկում Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման հարցը: Հայաստանի իշխանութիւնն այդպէս է պատասխանում այն պնդումներին, թէ Թուրքիան արդէն ներգրաւուել է Ղարաբաղի հակամարտութեան բանակցային գործընթացի մէջ: Այդ իրավիճակն արդէն դարձել է գրեթէ մեխանիկա: Թուրքերը յայտարարում են, որ Ղարաբաղի գործընթացի մէջ են, Հայաստանի ընդդիմութիւնը իշխանութեանը մեղադրում է այդ խայտառակութեան համար, իսկ իշխանութիւնն էլ յայտարարում է, որ Թուրքիայի հետ չի քննարկում Ղարաբաղի հարցը: Այդպէս կարուսէլի նման պտտուում են յայտարարութիւնները, իսկ ամէն մի պտոյտի հետ էլ այդ շրջանից դուրս է մնում տրամաբանութիւնը:

Օրինակ, ինչպէ՞ս կարելի է յայտարարել, որ Թուրքիայի հետ Հայաստանը չի քննարկում Ղարաբաղի հարցը, եթէ Սերժ Սարգսեանը մէկ տարի առաջ յայտարարեց, որ Թուրքիայի նախագահին առաջարկել է աջակցել Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորմանը:

Պատկերացնո՞ւմ էք, Սերժ Սարգսեանն առաջարկում է Թուրքերին աջակցել Ղարաբաղի կարգաւորմանը: Թուրքերը բնականաբար կը հարցնեն, թէ ի՞նչ աջակցութեան ակնկալիք կայ, յատկապէս որ պարագայում, ո՞ր ուղղութեամբ, ի՞նչ ձեւով: Բայց Հայաստանը պատասխանում է, թէ ինքը որեւէ բան չի պատրաստուում քննարկել: «Մենք ձեզ հետ քննարկելու բան չունենք, աջակցում էք, աջակցէք. չէք աջակցում, մի աջակցէք»: Մօտաւորապէս դա է ստացուում, երբ համադրում ենք աջակցութեան առաջարկի մասին եւ նաեւ Թուրքիայի հետ Ղարաբաղի հարցը չքննարկելու մասին Հայաստանի իշխանութեան յայտարարութիւնները: Կա՞յ արդեօք դրանց միջեւ տրամաբանական կապ: Հազիւ թէ:

Տրամաբանութիւնը թերեւս մէկ այլ, մի ինչ որ տեղ է, որտեղ Հայաստան եւ Թուրքիա, կամ առնուազն Հայաստան, գոյութիւն չունին: Հակառակ պարագայում Հայաստանի իշխանութիւնն իր որեւէ բացատրութեան մէջ շատ աւելի տրամաբանական բաներ կ'ասէր: Իսկ տրամաբանութիւնը բացատրուում է, որովհետեւ Հայաստանն ինքն էլ չգիտէ, թէ ինչ կայ ասելու: Օրինակ, եթէ մի պահ ենթադրենք, որ Հայաստանն այնքան ուժ է գտել իր մէջ, որ Թուրքիայի հետ քննարկել է Ղարաբաղի հարցը: Արդեօք այդ ամէնը ողբերգական իրողութիւն է, արդեօք դա միայն ու միայն դիւանագիտական ձախողման հարց է:

Իհարկէ ոչ: Ի վերջոյ, չէ՞ որ մենք Ադրբեյջանի դիւանագիտական յաղթանակ ենք համարում այն, որ նա Ղարաբաղի փոխարէն բանակցութիւնը վարում է Հայաստանի հետ, ինչպիսիսով տեղափոխելով տարած քային վէճի հարթութիւն: Իսկ ի՞նչ կը լինի, եթէ այդ դէպքում էլ Հայաստանը որոշի բանակցել ոչ թէ Ադրբեյջանի, այլ Թուրքիայի հետ: Իսկ Ադրբեյջանը թող գնա ինչ ուզում է անի: Սա առաջին հայեցանքից կարող է թուալ բաւուր իրողու-

թիւն: Բայց իսկական նախաձեռնողականութիւնը հենց դա կը լինի, ոչ թէ համաշխարհային կոնյուկտուրայից բխող հրաւերներ ուղղելը եւ յետոյ պարզապէս այդ ամէնի հետեւից վազելը:

Ունի՞ արդեօք Հայաստանն այդքան ուժ, որ կարողանայ իրեն այնքան բարձր դասել, որ Ղարաբաղի հարցն այլեւս քննարկի ոչ թէ Ադրբեյջանի, այլ նրա «մեծ եղբօր», Թուրքիայի հետ: Կարո՞ղ է արդեօք Հայաստանն այդքան «մեծ» գտնուել: Հազիւ թէ: Հայաստանի իշխանութիւնը մասնագիտացել է միայն անտրամաբանական հերքումների եւ բացատրութիւնների գործում, սարսափելով իր իսկ ստուերից:

Այո, Թուրքիան Ղարաբաղի հարցում ունի ադրբեյջանամէտ դիրքորոշում: Դա ուեւէ մէկի համար գաղտնիք չէ: Բայց այդ դէպքում, եթէ ընդհանրապէս կայ հայ-թուրքական բանակցութիւն, ապա միանգամայն տրամաբանական է, որ դրանում տեղ ունի նաեւ Ղարաբաղի խնդիրը: Նախապայման կը լինի դա, թէ ոչ, բայց աւելորդ է մտածել, թէ այդ հարցում Ղարաբաղ չի կարող լինել: Հետեւաբար անիմաստ հերքումների փոխարէն գուցէ պէտք է յստակ ի ցոյց դնել, թէ յատկապէս ի՞նչ ուսկուրսով, ի՞նչ բովանդակութեամբ է առկայ Ղարաբաղի խնդիրը հայ-թուրքական յարաբերութեան մէջ: Այսինքն, խնդիրն այն չէ, թէ Ղարաբաղը առկայ է կամ առկայ չէ: Խնդիրն այն է, թէ ինչ կարգավիճակով, ինչ բնոյթով, ինչ ընդգրկումով եւ ինչ տեսանկիւնով է Ղարաբաղի խնդիրը առկայ հայ-թուրքական յարաբերութեան մէջ: Դրանով է թերեւս պայմանաւորուած լաւն ու վատը, վտանգաւորն ու շահաւէտը, ոչ թէ ընդհանրապէս առկայ լինել-չլինելով:

**ՄԱՍԻՍ** ՇԱՐԱԹԱԹԵՐԹ  
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի  
ԽՄԲԱԳԻՐ՝  
ՏՕԲԹ ԱՐՇԱԿ ԳԱՋԱՆՃԵԱՆ  
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ  
ԳԱՐԻԷԼ ՍՈՒՅԵԱՆ  
ՍԱՐԱԿ ՌՈՒԹԵԱՆ  
ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ  
ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ  
ԼԵՆԱ ՍԱՆՈՒԿԵԱՆ  
Քեռ. (626) 797-7680  
Ֆաքս. (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com  
  
MASSIS Weekly  
Organ of the Armenian Social  
Democratic Hunchakian Party  
of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August  
3ANNUAL SUBSCRIPTION RATES:  
USA \$50.00, Canada \$60 (Second  
Class), \$75.00 (Air Mail)  
Overseas \$85.00 (2nd Class Mail),  
\$125.00 (Air Mail).  
All payments must be made in  
US funds & Drawn on US banks.  
Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
MASSIS WEEKLY  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104



ՀԱՅԱՍՏԱՆ

ՌԻԶԱՐԴ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՊԵՏՔ Է ՍՈՎՈՐԻ ԿԱՌԱՎԱՐԵԼ, ՈՉ ԹԵ ԴԵԿԱՎԱՐԵԼ»

Եւրոպական քաղաքական ուսումնասիրութիւնների կենտրոնը նոր գիրք է հրատարակել, որը անդրադառնում է Եւրոպային հարեւան երկրների ժողովրդավարութեան իրավիճակին: Հայաստանի մասով հրատարակումը գրել է Ռիչարդ Կիրակոսեանը:

Հրատարակման վերջին մասում, որը կոչւում է «Հետընտրական ճգնաժամի հետեւանքները», հեղինակը նշում է, որ «Հայաստանում յետընտրական ճգնաժամը, 2008 թուականի նախագահական ընտրութիւններում ցուցերի ալիքից ու հանրային դժգոհութիւններից յետոյ, հիմա երեք միտում է դրսեւորում»:

Առաջին, ճգնաժամը մնում է չլուծուած: Նախընտրական իրավիճակին վերադառնալու հաւանականութիւնը փոքր է: Հայաստանի ժողովուրդը ցուցաբերել է քաղաքացիական լիազօրութիւնների նոր արժէքներ:

Ռիչարդ Կիրակոսեանը Հայաստանի քաղաքական համակարգը համարում ոչ թափանցիկ ու փակ: Այսպիսի փակ համակարգում մեխանիզմներ չկան քաղաքական անհամաձայնութիւններ արտայայտելու համար, ինչը ուժեղացնում է գլխաւոր լարուածութիւնը եւ լիցք տալիս աւելի արմատական քաղաքական հայեացքներին:

Յետընտրական ճգնաժամի երկրորդ հետեւանքը, ճգնաժամը ցուցատուեց դժգոհութեան, հիասթափութեան ու զայրոյթի մակարդակի բարձրացումն է՝ ստեղծուած անհաւասարութեան հանդէպ, հարստութեան, եկամուտների, նաեւ իշխանութեան անհաւասարութեան հանդէպ, որ կայ այսօրուայ Հայաստանում:

Եւ երրորդ, գրում է Ռիչարդ Կիրակոսեանը, ճգնաժամը առաջացրեց նոր փուլ Հայաստանի քաղաքականութիւնում՝ բարեփոխումների ու առաջընթացի պահանջներով:

Սա մարտահրաւէր է Հայաստանի իշխանութիւնների համար՝ առաջ շարժուելու դէպի աւելի հրատարակային ու արդար քաղաքական համակարգ, հիմնուած համաձայ-



Վերլուծաբան Ռիչարդ Կիրակոսեան

նութեան եւ պատասխանատուութեան վրայ, այլ ոչ թէ հաստատուել վախով ու բռնաճնշումներով, նշում է վերլուծաբանը:

Բացի այդ, ըստ նրա, Հայաստանի կառավարութիւնը հիմա պէտք է երկիրը կառավարել սովորի, այլ ոչ թէ երկիրը ղեկավարել:

Այսպիսով, քանի որ քաղաքական ճգնաժամը հեռու է լուծուելուց, եւ ինչպէս երեւում է՝ այն կը շարունակուի, դեռեւս շատ իրական շանս կայ աննախադէպ փոփոխութիւնների համար, հնարաւորութիւն՝ ամփոփելու Հայաստանի քաղաքականութեան այս փուլի վերջին էջը, կարծում է Ռիչարդ Կիրակոսեանը:

Եւրոպական քաղաքական ուսումնասիրութիւնների կենտրոնը ժողովրդավարութեան իրավիճակի մասին գիրքը կազմել է երեք խմբի երկրների փորձագէտների օգնութեամբ: Առաջինում Եւրամիութեանը նոր անդամակցած արեւելաեւրոպական կամ Եւրամիութեանը մօտ երկրներ են՝ Բուլղարիան, Ռումինիան, Սերբիան եւ Թուրքիան, երկրորդում՝ ԱՊՀ-ի եւ յետխորհրդային երկրներ՝ Վրաստանը, Ուկրաինան, Հայաստանը, Մոլդովան, Ռուսաստանը, Ադրբեյջանը, Ղազախստանը եւ Բելառուսը, երրորդ խմբում Միջերկրականի հարաւային արաբական երկրներ են՝ Մարոկոն, Ալժիրը եւ Եգիպտոսը:

ՆՈՅՆԻՍԿ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵԳՆԱԺԱՄԸ ՉԻ ՍՏԻՊԵԼ, ՈՐ ՀԱՅԵՐԸ ՎԵՐԱԴԱՌՆԱՆ ՀԱՅՐԵՆԻՔ

Նոյնիսկ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը չի ստիպել, որ Հայաստանից արտագաղթածները վերադառնան հայրենիք: Մասնաւորապէս Տարածքային կառավարման նախարարութեան միգրացիոն գործակալութեան պետ Գագիկ Եգանեանը «Հայէլի» մամուլի ակումբում ասել է, որ չնայած տարեսկզբին արուած կանխատեսումներին: Հայաստան վերադարձող միգրանտների մեծածաւալ հոսք չի արձանագրուել: Գ. Եգանեանն այդ երեւոյթը բացատրել է 3 հանգամանքով.

- Աշխատանքի կորստի պայմաններում մարդիկ պատրաստ են միեւնոյն աշխատանքը կատարել աւելի ցածր վարձատրութեամբ կամ փորձում են այլ ոլորտներում ցածր վարձատրող աշխատանք փնտռել, եւ յետոյ հոգեբանական պահը կայ՝ այս ճգնաժամն ինչ-որ մի ժամանակ պէտք է աւարտուի:

Միգրացիոն գործակալութեան պետը նաեւ յաւելել է, որ համաշխարհային ֆինանսատնտեսական

ճգնաժամի պատճառով նուազել է ուղեւորահոսքերի ընդհանուր ծաւալների աճի տեմպը, 2009թ. Յունուար-Սեպտեմբեր ամիսներին հանրապետութիւնից մեկնածների թիւը գերազանցել է հանրապետութիւն ժամանածների թիւին, գրանցուել է դրամական փոխանցումների ծաւալների նուազում. միայն Ռուսաստանից ստացուող դրամական փոխանցումները նուազել են 37,3%-ով:

Խնդիրներ կան նաեւ աշխատանքային միգրացիոն ծրագրերի իրականացման ոլորտում:

- Խնդիրներից թերեւս կարեւորագոյնն այն է, որ մենք սկսեք մեր երկրի ներսում այնպիսի պայմաններ դնել այս գործունէութեամբ զբաղող միջնորդ կարգմակերպութիւնների առջեւ, որ մեր քաղաքացիների շահն ու իրաւունքը պաշտպանուած լինեն, որ չլինի ոսկէ սարերի խոտատացում, բայց դրա անուան տակ ընդամենը դրամաշորթում, եւ ոչ մի ծառայութիւն չմատուցուի, ինչին, ցաւօք սրտի, մենք բոլորս ականատես ենք,- ասել է Գ. Եգանեանը:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ «ՁԱԽՈՂԵԼ Է ԲԻԻՋԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ»

Հայաստանի նախկին վարչապետ Հրանդ Բազրատեանի համոզմամբ, կառավարութիւնը տնտեսութեան մէջ «ձախողել է ամէն ինչ», այդ թւում, ընթացիկ տարուայ բիւջէի կատարումը:

«900 միլիարդ են կատարելու այն դէպքում, երբ բիւջէ տարելը եւ վարկով վերցրած փող, որը նախատեսած չէր», - «Ազատութիւն» ռադիոկայանի հետ բացառիկ հարցազրոյցում ասաց Բազրատեանը: - «Պատկերը 2009-ի մօտաւորապէս այսպիսին է. եկամտային մասով բիւջէն կը թերակատարուի 30 տոկոսով, դրամի կուրսի փոփոխութիւնը հաշուած՝ 45 տոկոսով, ծախսային մասը կը թերակատարուի 15 տոկոսով, դրամի կուրսը հաշուած՝ 25 տոկոս: Այլ խօսքերով ասած՝ 2009-ի 3 միլիարդ դոլար բիւջէի փոխարէն, որը նախագահական խոստում էր 2008-ի ընտրութիւնների ժամանակ, ունենալու ենք 1,8-1,9 միլիարդ դոլար: Սա փաստ է»:

Հարցին, թէ ինչ է նշանակում տնտեսութեան համար բիւջէի նման թերակատարումը, նախկին վարչապետը արձագանքեց. - «Դա նշանակում է ֆինանսաւորման բացակայութիւն, յետոյ բիւջէն հիմնականում չի կատարուում: Իրենք, ինչքան ես եմ հասկանում, փորձում են ներդրումները պահել: Ասում են, որ կրճատել են երկրորդական ծախսերը: Անմիջապէս հարց է ծագում. Բիւջէում, ինչ է, կան երկրորդական ծախ-



Հայաստանի նախկին վարչապետ Հրանդ Բազրատեան

սէ՞ր, աւելորդ ծախսեր: Բացարձակ ցինիզմ է պատասխանը: Իրենք կրճատում են այնպիսի ծախսեր, որոնք իջեցնում են համախառն պահանջարկի կորը, ինչը է՛լ աւելի է կրճատելու բիզնեսը, առեւտուրը եւ այլն»:

Տիգրան Սարգսեանի կառավարութեան գործունէութիւնը, ըստ Բազրատեանի, «վրդովմունքից բացի, այլ բան առաջացնել չի կարող». - «Իրականում այս տարուայ բիւջէն, նոյնիսկ [տնտեսութեան] 18 տոկոս անկման դէպքում, պէտք է գերակատարուէր: Բանն այն է, որ դրամը դոլարի նկատմամբ արժեզրկուել է 26 տոկոսով, եւրոյի նկատմամբ՝ արժեզրկուել է 45 տոկոսով: Նկատի ունենալով 18 տոկոս անկումը, կոպիտ հաշուարկով բիւջէն պէտք է գերակատարուէր 12 տոկոսով»:

ՎԱՐՎԱՆ ՇԻՐԻՍԱՆԵԱՆԸ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆԵԱՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան կենտրոնական վարչութեան անդամ Վահան Շիրիսանեան պատասխանում է «7 Օր»-ի հարցերին:

- Ինչպէ՞ս էք վերաբերում այն փաստին, որ թիւ 10 ընտրատարածքում պատգամաւորութեան թեկնածու է առաջադրուել «Հայկական ժամանակ» օրաթերթի գլխաւոր խմբագիր Նիկոլ Փաշինեանը:

- Միմիայն դրական: Դժուար թէ ընտրուի, դժուար թէ դառնայ պատգամաւոր, բայց, որպէս քաղաքական գործընկեր, քաղաքական մտորիւններով հետապնդող, քաղաքական առումով արդարացուած, ճիշդ քայլ է դա: Կարող է նաեւ յանկարծ այնպիսի մեծ առաւելութիւնով ընտրուի, որ դժուար լինի ճանապարհը փակել դէպի խորհրդարան: Ամէն ինչ պատահում է: Կարող է եւ իսկապէս պատգամաւոր դառնալ:

- Այդ քայլի բուն նպատակը ո՞րն է:

- Յոյց տալ ժողովրդի, ընտրողի, քաղաքացու, հասարակութեան, Երեւանի, կենտրոնի բնակիչների գոնէ մի մասի իրական վերաբերմունքը Նիկոլ Փաշինեանի նկատմամբ:

- Այս պահին արտահերթ համապետական ընտրութիւնները հնարաւոր համարո՞ւմ էք:

- Արտահերթ ընտրութիւններ լինում են Սահմանադրութեամբ գրուած դէպքերում միայն: Նման դէպք կամ նման իրավիճակի ստեղծման հաւանականութիւն ես այսօր չեմ տեսնում:

- Կարելի՞ է ասել, որ Նիկոլ Փաշինեանի առաջադրումը ՀԱԿ-ը ընտրողներին հասկացնում է, որ արտահերթ ընտրութիւններ չեն լինելու:



ՄԻՋԿ կենտրոնական վարչութեան անդամ Վահան Շիրիսանեան

- Ես այդպէս չէի ասի: Նիկոլ Փաշինեանը գտնուում է բանտում, կարգավիճակն ուրիշ է, եւ դա նրան օգնելու ինչ-որ մի ճանապարհ է, որից պէտք է անպայման օգտուել. մի կողմից քաղաքական խնդիր կայ, միւս կողմից՝ գոտ մարդկային: Իսկ դրանով ցուց տալ, որ, հանգստացէ՛ք, այլեւս մենք չենք գնալու, այդպիսի բան չկայ. Կոնգրեսը բազմաթիւ անգամ է յայտարարել, որ պայքարելու է մինչեւ վերջ եւ հանելու է սահմանադրական կարգի հաստատմանը:

- Ն. Փաշինեանի նկատմամբ ժողովրդի վերաբերմունքը ցուց տալն ինչո՞վ կ'օգնի նրան:

- Կ'օգնի նրանով, որ եւ՛ Հայաստանի հասարակութեանը, եւ՛ համաշխարհային հանրութեանը ցուց կը տան, թէ մարդիկ ինչպէս են վերաբերուում մի մարդու, ով



**ԼՈՒՐԵՐ**

**ԷՂՈՒԱՐԴ ՆԱԼԲԱՆԴԵԱՆ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՆՔՆ Է ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՅԱՑՆՈՒՄ»**

Անցեալում են այն ժամանակները, երբ Հայաստանը կարող էր ինչ-որ քայլեր անել ճնշումների եւ պարտադրանքի ներքոյ. Հայաստանն ինքն է որոշումներ կայացնում, որոշումներ կայացնում է Հայաստանի բարձրագոյն ղեկավարութիւնը: Բեյրութի պաշտօնակից Սերգեյ Մարտինովի հետ համատեղ ասուլիսի ժամանակ այդ մասին յայտարարեց ՀՀ արտգործնախարար Հրաչ Կարապետեանը՝ արձագանքելով այն պնդումներին, թէ հայկական կողմը ԶԻԼԻԻԻ-եան արձանագրութիւնները ստորագրել է միջազգային հանրութեան ճնշման տակ:

Բացառութեամբ մէկ-երկու երկրի, միջազգային ամբողջ հանրութիւնը աջակցում է այս գործընթացին, որը, ի դէպ, նախաձեռնել է Հայաստանը, ասաց Կարապետեանը՝ յիշեցնելով այն իրադարձութիւնները, որոնք անմիջապէս յաջորդեցին ստորագրմանը. «Ստորագրումից կէս ժամ յետոյ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը կոչ արեց երկու կողմին՝ շուտափոյթ վաւերացնել, յարգել պայմանաւորութիւն-

ները եւ իրականացնել զայն: Դրա մասին յայտարարեց Եւրամիութիւնը, դրա մասին յայտարարեց Ֆրանսիան, դրա մասին յայտարարեց Գերմանիան, դրա մասին շատ յստակ եւ պարզ եւ միանշանակ ձեւով արտայայտուեց Ռուսաստանը»:

Ի պատասխան լրագրողների յիշեցման, որ թուրք պաշտօնատարներն իրենց յայտարարութիւններում շարունակում են հայ-թուրքական համաձայնութիւնների ճակատագիրը կապել Ղարաբաղեան խնդրի հետ, Նալբանդեանը վերահաստատեց պաշտօնական երեւանի այն դիրքորոշումը, համաձայն որի՝ այդ երկու հարցերը փոխկապակցուած չեն: Աւելին, նրա խօսքերով, դա միայն Հայաստանի դիրքորոշումը չէ՝ այդպիսին է նաեւ Միւնխի խմբի համանախագահ երկրների մօտեցումը:

«Այսինքն, դա միայն Հայաստանի յայտարարութիւնները չեն՝ «ներքին սպառման» համար, ինչպէս դուք էք ասում, այլ նաեւ միջազգային հանրութեան դիրքորոշումն է», - ասաց Հայաստանի արտգործնախարարը:

**ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՍԽՐԱՆՔՆԵՐԸ**

Ըստ լրատուամիջոցների տարածած տեղեկատուութեան՝ Մոսկուայում International Alert միջազգային կազմակերպութիւնը կազմակերպել էր փորձագիտական կլոր սեղան «Լեռնային Ղարաբաղի հակամարտութիւնը. խարդախութեան հաստատման համար պայմանների ստեղծում, Ռուսաստանի դերը», որին մասնակցում էին Հայաստանի, Ռուսաստանի, Ատրպէյճանի ներկայացուցիչները:

Հայաստանից հրաւիրուած էին քաղաքագետներ Ալեքսանդր Իսքանդարեանը, Կարէն Բեքարեանը, Արտակ Կիրակոսեանը:

Հանդիպումը վարող 1-ին ակտիվ հաղորդավար, ՌԴ ԶՊ անդամ Մաքսիմ Շեւչենկոն ատրպէյճանական պատուիրակութեան պահանջով ժամանակից շուտ դա-

դարեցրել է Ռուսաստանում ԼՂՀ ներկայացուցչի ելոյթը:

Միւսնոյն ժամանակ մեր պատուիրակութիւնը չի առարկել Ռուսաստանի Իսլամական կոմիտէի ղեկավար Հէյդար Զեմալի մասնակցութեանը, որը մի քանի օր առաջ ատրպէյճանական «Զերկալօ» թերթին տուած հարցազրոյցում յայտարարել էր, որ Լեռնային Ղարաբաղի հարցի լուծման համար պէտք է կազմալուծել հայկական պետականութիւնը (Հայաստանի Հանրապետութիւնը):

Ի տարբերութիւն ատրպէյճանական պատուիրակութեան սկզբունքային դիրքի՝ մեր պատուիրակութիւնը շարունակել է մասնակցել հանդիպմանը Հէյդար Զեմալի արդիւնաւէտ մասնակցութեամբ:

**ԱԼԻԵՆ ԱՐՀԱՍԱՐՅԵԼ Է ԹՈՒՐՔԻԱՅԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՅ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ**

Հոկտեմբերի 29-ին թուրք-իւսթի Հանրապետութեան անկախութեան օրուայ կապակցութեամբ Բաքուի «Գիւլիստան» պալատում կազմակերպուած հանդիսաւոր միջոցաւմանը Ադրբեյջանի նախագահ Իլհամ Ալիեւը չի մասնակցել:

Միջոցաւման անցկացման ժամանակ Իլհամ Ալիեւը գտնուել է Իսմայիլլիի շրջանի Իվանովկա գիւղում:

Միջոցաւմանը մասնակցել են Ատրպէյճանի նախագահի վարչա-

կազմի հասարակական-քաղաքական բաժնի ղեկավար Ալի Հասանովը, խորհրդարանի առաջին փոխխօսնակ Զիւսեյնաթ Ասգերովը, պաշտպանութեան նախարար Սաֆար Աբիեւը, այլ պաշտօնեաներ, պատգամաւորներ, ՉԼՄ-երի ներկայացուցիչներ, Ատրպէյճանում հաւատարմագրուած դիւանագիտական կորպուսի ներկայացուցիչներ, ինչպէս նաեւ այցով Բաքուում գտնուող թուրքիւսթի խորհրդարանի պատուիրակութիւնը:

**ՎԱՅԱՆ ՇԻՐԽԱՆԵԱՆԸ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆԵԱՆԻ ՄԱՍԻՆ**

Շարունակուած էջ 3-էն

նստած է բանտում եւ մեղադրուած է, Աստուած գիտի, թէ ինչի համար: Առաջինը բարոյական է: Իրաւական օգնութիւն կը լինի

միայն այն դէպքում, եթէ նա ընտրուի եւ որպէս պատգամաւոր՝ ազատ արձակուի: Բայց դա էլ կարող է կարճ ժամանակ տեւել՝ զան Աժ, նորից սանկցիւր վերցնեն, նորից տանեն:

**«ՀԱՅ - ԹՈՒՐՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՈՂԱՐԱԲԱՂԻ ՀԵՏ ԿԱՊԵԼՈՒ ԶԳՏՈՒՄԸ ՈՐՈՇԱԿԻ ԹՈՅԼԱՏՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻՒՆՔ Է»**

Հայ - թուրքական գործընթացը Ղարաբաղեան խնդրի հետ կապելու՝ պաշտօնական Անգարայի ձգտումը որոշակի թոյլատրուածութեան արդիւնք է: Եւրոպա կատարած երկշաբաթեայ ուղեւորութեան ընթացքում այս տպաւորութիւնն է ստացել Ազգային ժողովի «Ժառանգութիւն» խմբակցութեան ղեկավար Ստեփան Սաֆարեանը:

Ինչպէս «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում փոխանցեց ուղեւորութիւնից օրերս վերադարձած Սաֆարեանը, Եւրասիանաժողովի, Եւրասիոհրճարարի ու այլ ազդեցիկ կառույցների որոշ բարձրաստիճան պաշտօնեաներ համարում են, որ «այնուամենայնիւ, այդ շատ հասկանալի եւ բնական կը լինի, եթէ թուրքիւսթի վաւերացնի այդ պայմանագրերը այն դէպքում, երբ Ատրպէյճանի հետ յարաբերութիւններում՝ Ղարաբաղեան հակամարտութեան հարցում, արձանագրուի դրական դիւնամիզմ»:

«Այսինքն, որքան էլ եւրոպական տարբեր պաշտօնեաներ յայտարարում են այս երկու գործընթացների չփոխկապակցուածութեան մասին, որոշ հանդիպումներում, որպէս մասնաւոր կարծիքներ, չէր թաքուում, որ թուրքիւսթի կողմից դա միանգամայն հասկանալի, իր պատճառները ունեցող վարքագիծ է, եւ, բնականաբար, այդպէս պէտք է լինի», - ասաց ընդդիմադիր խմբակցութեան ղեկավարը:

Եւ, ըստ Ստեփան Սաֆարեանի, հայկական կողմը հարկադրուած է առաջ շարժուելու համար զնալ գիշումների Ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման հարցում: Ըստ նրա, Հայաստանի վարած



Ազգային ժողովի «Ժառանգութիւն» խմբակցութեան ղեկավար Ստեփան Սաֆարեան

սխալ դիւանագիտութեան արդիւնքում ատրպէյճանական տերմինաբանութիւնը՝ «օկուպացուած» տարածքների մասին, մտաւ կիրառութեան մէջ, եւ Եւրոպայում էլ յաճախ խօսում են նոյն տերմինաբանութեամբ:

Սաֆարեանի վկայութեամբ՝ եւրոպական կառույցների պաշտօնեաները հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման գործընթացն ընդհանուր առմամբ ողջունում էին, սակայն նաեւ կիսում էին «Ժառանգութիւն» կուսակցութեան մտահոգութիւնները, թէ հայ-թուրքական արձանագրութիւնները լուրջ թերութիւններ ունեն:

Ստեփան Սաֆարեանը եւրոպացի պաշտօնեաների հետ քննարկել է նաեւ Հայաստանի ներքին ժողովրդավարութեանը վերաբերող խնդիրներ:

**ԼՂՀ ՎԱՐՉԱՊԵՏ. «ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԻՋՈՒՄՆԵՐ ԶԵՆ ԼԻՆԵԼՈՒ»**

ԼՂՀ վարչապետ Արա Հարութիւնեանը, ով գլխավորել է «Ազատ Հայրենիք» կուսակցութիւնը, լրագրողներին ասել է, որ Ստեփանակերտը պաշտոնապէս չի ստացել Ղարաբաղեան հակամարտութեան կարգաւորման այն փաստաթուղթը, որում ամբողջովն են «Մարտի դեան սկզբունքները» - «Դրանց մասին մենք գիտենք թերթերից եւ տեղեկատվական աղբյուրներից, ինչը մեզ համար չի կարող փաստաթուղթ հանդիսանալ», - ասել է ԼՂՀ վարչապետը: «Լեռնային Ղարաբաղի տարածքը, ամբողջովն է հանրապետութեան սահմանադրութեամբ, եւ մենք տարածքների առումով չենք կատարի որեւէ գիշում: Ասելով տարածք, մենք հասկանում ենք Արցախի ներկայիս փաստացի տարածքը: Սա մեր դիրքորոշումն է, որով էլ մենք առաջնորդվելու ենք», - ընդգծել է Արա Հարութիւնեանը: Նրա խոսքերով, Հայաստանի եւ Ղարաբաղի կողմից ցանկացած փաստա-



ԼՂՀ վարչապետ Արա Հարութիւնեան

թուղթ կրնա ընդունվի միայն ժողովրդի հավանութեանը արժանանալուց հետո: «Վերջին խոսքը լինելու է ժողովրդինը», - շեշտել է ԼՂՀ վարչապետը:

**ԱՐԿԱԴԻ ՂՈՒԿԱՍԵԱՆԻ ԱՅՅԸ**

Շարունակուած էջ 1-էն

նադրամի կարեւոր իրադրոշումներուն եւ յառաջիկայ ծրագրերներուն ու յատկապէս Շուշիի վերաշինութեան հրամայականին վրայ:

Այնուհետեւ տեղի ունեցաւ

շուրջ երկու ժամ տեւող միտքերու աշխոյժ փոխանակում, մասնաւորաբար Արցախի, Հայաստան-Սփիւռք եւ հայ-թրքական յարաբերութիւնները, արձանագրութիւնները հետեւանքներու եւս յլ այժմեական հարցերու շուրջ:

**ՄԱՍԻՍ**  
**ԱՄԵՆԱՎԱՍՏԱԿԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ**



**ՎԱՐՑԱԶՐՈՅՑ**

**«ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՊԱՏՐԱՍ ԶԷ ԱՅՆՊԻՍԻ ԶԻՋՈՒՄՆԵՐԻ, ՈՐՈՆՔ ԿԱՐՈՂ ԵՆ ՎՏԱՆԳԱԴՈՐ ԼԻՆԵԼ ՈՉ ՄԻԱՅՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ, ԱՅԼԵԻ, ԱՍԵՆՔ, ԻՐ ԻՆՔՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ, ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ»**

**ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՇԻՐԱԿԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՄԻՔԱՅԵԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԶԱՊԱՅԵԱՆԻ ՀԵՏ**

**Զրոյցը վարեց ԴԵՐԵՆԻԿ ՄԱԼԽԱՍԵԱՆ**

- Հայ-թուրքական յարաբերութիւնների հաստատումը ներկայիս տեսքով եւ այս բովանդակութեամբ պէտք է գոհացնի՞ հասարակութեանը, թէ՞ ավելի շատ մտահոգութիւն տեղիք տայ: Ինչպիսի՞նք է հոգեւորականի կարծիքը:

- Հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորումը պէտք է ուրախացնի, սակայն այստեղ միշտ պէտք է ի մտի ունենալ, թէ ի՞նչ գնով: Հասարակութիւնը, ազգը պատրաստ է: Ազգը խնդիր չունի: Բայց մեր ժողովուրդը պատրաստ չէ այնպիսի զիջումների, որոնք կարող են վտանգաւոր լինել ոչ միայն պետականութեան, այլեւ, ասենք, իր ինքնասիրութեան, ինքնութեան համար:

- Դուք այս յարաբերութիւններում նման զիջումներ կամ գին տեսնու՞մ եք:

- Այո՛, տեսնում եմ: Կարծում եմ մեր դիւանագիտութիւնն այդ իմաստով այս տարիներին ընթացքում եղել է մի քիչ պաշտպանական, երբեմն նոյնիսկ պարտուողական, իսկ հարեւանից երբէք առաւելագոյնը չի պահանջուել, ինչի հիմքերը կային, որովհետեւ Թուրքիան իրաւունք չունէր սահմանը փակելու: Այսինքն, ինքը թշնամական գործողութիւն է կատարել Հայաստանի հանդէպ, եւ Հայաստանը երբեք այդ հարթութիւնից չօգտուեց, պահանջելով սահմանի բացում, նոյնիսկ միակողմանի բացում: Ընդհակառակը, գնաց այսպիսի փոխզիջման, երբ սահմանը կարծես երկուստեք է փակուել եւ երկուստեք է բացուել: Անշուշտ, նաեւ սահմանի, տարածքային ամբողջականութեան, ինչպէս նաեւ Կարսի պայմանագրի ճանաչման խնդիր կայ: Սրանք այն փոխզիջումներն էին, որոնք, ըստ իս, անհրաժեշտ չէին:

- Այս տեսանկիւնից գրեթէ 10 մլն հայութեանը յուզողը Յեղասպանութեան հարցն է: Կը խնդրի շատ յստակ պատասխանել, մենք Յեղասպանութեան փաստն այս փաստաթղթերով կասկածի տակ առնու՞մ ենք, թէ ոչ:

- Կարելի է ասել, եւ այո, եւ ոչ, նայած, որ տեսանկիւնից եւ նայում: Օրինակ, այս արձանագրութիւններում մերոնք, իբրեւ արդարացում, ասում են, տեսէ՛ք, Յեղասպանութիւնը նշուած չէ: Բայց ես ասում եմ, որ շատ ավելի լաւ կը լինէր, որ նշուէր իբրեւ Հայաստանի կողմից պահանջատիրութիւն, որ Հայաստանը չի հրաժարուել Յեղասպանութեան հատուցման իր պահանջից: Հայաստանը երբեք չպէտք է հրաժարուէր Յեղասպանութեան նկատմամբ իր պահանջատիրութիւնից: Դա իբրեւ փաստարկ, իբրեւ յղթաթուղթ, պէտք է միշտ լինի հայ-թուրքական յարաբերութիւնների մէջ: Քաղաքական յարաբերութիւնները չեն կարող հաստատուել լռելով Յեղասպանութեան մասին:

Ես Հայաստանի իշխանութիւնների շրջանում այն վտանգն եմ տեսնում, որ կարծես թէ Յեղասպանութիւնը դարձնում են ներքին խնդիր, այսինքն մենք մեզ համար



Ապրիլի 24 ենք նշում, Յեղասպանութեան զոհերի յուշարձանին ծաղիկ ենք դնում եւ այդքանով բաւարարուում ենք: Դրա դիմաց չենք պահանջում ոչ բարոյական, ոչ նիւթական հատուցում եւ ընդամէնը խնդիր ենք դնում մեզ ճանաչել տալու աշխարհին իբրեւ ցեղասպանուած ժողովուրդ:

- Իշխանութիւններն այս առումով պնդում են, թէ իրենք շարունակելու են Յեղասպանութեան միջազգային ճանաչման գործընթացը:

- Լաւ, պետութիւնները ճանաչեցին Յեղասպանութիւնը: Որ ի՞նչ: Սոսկ ճանաչելու՞ համար, որպէսզի մենք աշխարհում ման գանք, եւ բոլորը մեզ ճանաչեն իբրեւ ցեղասպանուած ժողովուրդ, թէ՞ դրա դիմաց հատուցում պահանջենք: Այդ հատուցման խնդիրն այսօր եւ մեր իշխանութիւնների օրակարգում չեն տեսնում: Եւ եթէ եկել է այդ պահանջը դնելու առիթը, ինչո՞ւ հիմա չի դրոււմ: Երբ սահմանը բացելու համար Թուրքիայի վրայ սոսկալի ճնշում կար, մենք, փոխանակ այս հարցով ուժեղացնէինք ճնշումը, Թուրքիային օգնեցինք ձեռքազատուելու այդ ճնշումից: Եւ ես այստեղ շատ կ'ուզենայի հաւատալ մեր իշխանութիւնների, մեր դիւանագէտների բացարձակ պրոֆեսիոնալիզմին, բայց ինձ չի համոզում այն բացատրութիւնը, որ տրոււմ է: Եւ միակ իմ յօսան այն է, որ երեւի իրենք ինչ-որ քայլեր ի նկատի ունեն: Դե, մեր նախազանն էլ շախմատի ֆեդերացիայի նախագահն է, երեւի շախմատային մտածելակերպով ինչ-որ քայլեր նկատի ունեն, որոնք, ի վերջոյ, հանգեցնելու են յղթմանակի: Բայց ուշալ կերպով դա ես չեմ կարողանում տեսնել:

- Սրբազան, միգուցէ մեր հասարակութիւնն է այս 90 եւ ավելի տարիների ընթացքում Յեղասպանութեան խնդրի առնչութեամբ դարձել պակաս պահանջատէր, պակաս հետեւողական: Միգուցէ մենք հասարակութեամբ առումով խնդիր ունենք:

- Գիտէ՞ք, տասնամեակներ շարունակ մեր ժողովուրդին համոզել են, որ պահանջատիրութիւնն ավելորդ բան է, կեղծ է: 70 տարի կոմունիստական իշխանութիւնը համոզել է, թէ այլեւս մոռացէք տարածքային պահանջատիրութիւնը: Համոզում էին, որ այլեւս անհնար է ինչ-որ բան փոխել, ասում էին Թուրքիան իր սահմանն

արդէն գծել է, մենք Կարսի պայմանագրով ընդունել ենք, Նախիջեւանը Անդրբեջանինն է, ինչ որ եղել է, եղել է, մոռացէ՛ք, հիմա զրոկէտից սկսէք ապրել: Այս ամէնը, իրօք, ազդեցութիւն ունեցել է, սակայն ոչ այն չափով, ինչ չափով իրենք կ'ուզենային: Սակայն մինչեւ հիմա մեր ժողովուրդի զգալի մասը, համոզուած եմ նաեւ այսօրուայ իշխանութիւնները, այն համոզմունքն ունեն, թէ որեւէ տարածքային պահանջ, որեւէ հատուցում այլեւս անհնար է: Յայտարարում են, թէ եկէք իզուր տեղն այլեւս տարածքային պահանջի կամ հատուցման մասին չխօսենք: Փաստորէն, մենք հիմա անկարողութիւնն ից 20 տարի անց, վերադարձել ենք այն նոյն կոմունիստական շրջանի գաղափարախօսութեանը, թէ ոչինչ փոխել հնարաւոր չէ: Պահանջատիրութիւնը շատ դժպէտը ունէր կայացում է որպէս ռոմանտիզմ: Առաւելագոյնը ձեռք բերելը միշտ ռոմանտիզմ է, բայց պէտք է առաւելագոյնը պահանջես, որ ինչ-որ բան ստանաս: Ես էլ եմ մտածում, որ այսօրուայ վիճակում տարածքային փոխհատուցում ստանալը մի քիչ ռոմանտիկ է թւում: Բայց դրա դիմաց դու կարող ես իրաւունք ձեռք բերել քո հայրենի վայրերը վերադառնալու, փոխհատուցում ստանալու, քո պապենական ունեցուածքին տէր կանգնելու, վստահ լինելու, որ մեր եկեղեցիները եւ մշակութի վայրերն այլեւս չեն աւերուել: Եթէ դու ընդհանրապէս պահանջ չունես, ի՞նչ ես ուզում ստանալ:

- Սակայն իշխանութիւնները շատ դժպէտը պնդում պնդում են, թէ եթէ սահմանը բաց լինի, Հայաստանը տնտեսապէս կը հզօրանայ, ուժեղ պետութիւն կը դառայ, եւ միայն այդ դժպէտը կարելի կը լինի ինչոր բան պահանջելու եւ ստանալ:

- Իսկական ռոմանտիզմն այստեղ է: Ինչ-որ զարգացում կարող է լինել, չպէտք է ժխտել, բայց եթէ պէտք է գործեն մաքսային այն օրէնքները, որոնք հիմա գոյութիւն ունեն, մեր ժողովուրդը ոչնչով չի շահելու, շահելու են մի խումբ մարդիկ: Օրինակ վրաստանի սահմանը բաց է, բայց մեր գիւղացին կարողանում է իր կարողութիւնը վրաստանում վաճառել: Իհարկէ ոչ: Ի՞նչ երաշխիք կայ, որ մեր գիւղացին իր կարողութիւնը կը կարողանայ վաճառել Կարսում: Սակայն նոյնիսկ ինչ-որ անտեսական օգուտ են թաղելով մտածել, թէ կարելի էր այս գիջումներին գնալ, աններելի է:

- Դուք տեսնու՞մ եք Կարսի պայմանագրի վերափաստատման վտանգը, եւ այդ վտանգն ինչպիսի՞ բնոյթ է կրում:

- Թուրքերը մեզ հետաքրքիր ծուղակի մէջ են գցել նշելով, թէ սահմանը վերահաստատում ենք, ոչ թէ հաստատում: Այսինքն, մենք մի անգամ 1921թ., հաստատել ենք Կարսի պայմանագրով: Սա ի՞նչ է նշանակում. որ մենք պահանջներ չունենք, Թուրքիայի տարածքային ամբողջականութիւնը ճանաչում ենք, հետեւաբար մեր պահանջատիրութիւնը, որպէս այդպիսին, գոյութիւն չունի, եւ Յեղասպանութեան խնդիրն էլ ներքին սպառ-

ման առարկայ է, Հայաստանում ինչքան ուզում էք, խօսէք: Այս արձանագրութիւններով ոչ մի բան չի հարթուում, ընդհակառակը խնդիրները քնեցում են: Այսինքն, շարունակենք լռել Յեղասպանութեան մասին, Ղարաբաղի մասին, շարունակենք լռել, որ մենք տարածքային պահանջ ունենք եւ այլն:

- Դուք Ձեր խօսքում չիշատակեցիք Ղարաբաղը: Ձեր կարծիքով այս երկու խնդիրները հայ-թուրքական յարաբերութիւնները եւ զարաբաղեան հակամարտութիւնը, իրար հետ կապուած են այն դէպքում, երբ իշխանութիւնները նշում են, թէ արձանագրութիւններում Ղարաբաղի անունը չի յիշատակուում:

- Աւելի վատ, որ չի յիշատակուում. դա է Դավութբոլուի, Երրորդահին հնարաւորութիւն տալիս ասելու, թէ քանի դեռ Ղարաբաղի հարցը չի լուծուել, մենք սահման չենք բացելու: Դեռ այս արձանագրութիւնների մէջ պէտք է լինէր, որ այս յարաբերութիւնների հաստատումը եւ սահմանի բացումը պայմանաւորուած չեն Ղարաբաղի հարցով:

- Գիտէ՞ք, ես այս երկու խնդիրների մէջ չեմ կապ տեսնում. դա մէկ ընդհանուր հարց է: Ադրբեջան, Թուրքիա նոյն ժողովուրդն են, նոյն ազգութիւնը, սակայն երկու պետութիւն: Թուրքիայի համար չկայ Ղարաբաղի իբրեւ երրորդ պետութեան հարց, Ղարաբաղի հարցն է, որովհետեւ դա Թուրքիայի համար հայոց պահանջատիրութեան ժամանակաւոր յղթմանակն է: Եթէ ինքը կարողանայ մեզ այնտեղ պարտութեան մատնել, ուրեմն հայութիւնը պէտք է առնուազն հարիւր տարի մոռանայ այլեւս Կարսն էլ, Իզդիրն էլ, Արարատն էլ: Թուրքական պետութիւնը ոչ թէ Ադրբեջանին է սատարում, ինքն իրեն է սատարում: Եթէ հայերը Ղարաբաղը «մարսեն», պարզ է, որ պէտք է Ղարսը պահանջեն: Ուրեմն Թուրքիան ամէն ինչ պէտք է անի, որ հայերը Ղարաբաղը «չմարսեն»:

- Շատերը ներկայումս մտնում են, որ այսօրուայ թուրքը 1915թ. թուրքը չէ, եւ այսօրուայ թուրքի հետ հնարաւոր է լեզու գտնել: Դա ճիշտ տրամաբանութիւն է:

- Հայ մարդն այսքան ժամանակ չի կարողացել հասկանալ թուրքական ինքնութիւնը: Թուրքը իբրեւ անհատ, վտանգաւոր չէ: Բայց թուրքը իբրեւ ամբողջ, վտանգաւոր է եղել ինչպէս 1915թ., այնպէս էլ 2009թ., վտանգաւոր կը լինի նաեւ 2119թ.: Նոյն 1915թ. շատ թուրք անհատներ փրկել են հայերին, սակայն երբ այդ թուրք անհատը յայտնուում էր ամբողջի մէջ, անում էր այն, ինչ անում էր ամբողջը: Եթէ այսօր էլ Թուրքիայում ինչ-որ մի ամբողջային վիճակ լինի, կրկնուելու է 1915թ.-ն: Եթէ, ասենք, Բուրսայում Հայաստանը յղթէր 2:0 հաշուով, հաստատ համոզուած եղէք որոշ խժժութիւններ լինելու էին, հաստատ ինչ-որ վանք էին պայթեցնելու, մի փոքրիկ թաղամասում մի քրիստոնէայի վրայ էր յարձակում լինելու: Այս առումով, փառք Աստուծոյ, եւ այստեղ, եւ այնտեղ մեր թիմը պարտութիւն կրեց:



### ԳԱԼԻՖՈՐՆԻՈՅ ԶԱՅ ՎԱՐԺԱՐԱՆՆԵՐԸ Ի՞ՆՉ ԻՐԱԳՈՐԾԵՑԻՆ ԿԵՍ ԴԱՐ

#### ՀԱՅԿՈՒՀԻ ՓԱԹԱՓՈՒԹԵԱՆ

Հայը ուր որ գաղթած է եւ հաստատուած, կառուցած է նախ եկեղեցի եւ ապա դպրոց, յաճախ իրարու կից, եւ բոլորուած է անոնց շուրջ:

Տարբեր չէր կրնար ըլլալ Ամերիկայի եւ մանաւանդ Գալիֆորնիոյ պարագային, ուր հոծ գաղութ մը սկսաւ կազմուիլ, մօտ յիսուն տարիներ առաջ, գաղթելով գանազան երկիրներէ, բոլորիս ծանօթ պատճառներով: Իրարու ետեւէ հիմնուեցան տասնըչորս հայկական վարժարաններ, թէ ուսում ջամբելու, դաստիարակելու եւ թէ մանաւանդ հայապահպանութի համար. անշուշտ ա՛յս էր բուն նպատակը: Յաջողեցան անոնք իրենց առաքելութեան մէջ՝ անշուշտ թէ այո՛: Աւելի լաւ կրնային ընել՝ անկասկած, թերութիւններ կային եւ կան տակաւին՝ անպայման: Բայց անոնք կատարեցին անուրանալի դեր մը այս գաղութին հայկական դիմագիծը պահելով: Տանք քանի մը յատկանշական օրինակներ, անոնցմով մանուկն ու պատանին կ'ունենան հայկական առողջ միջավայր ու մթնոլորտ, ուր կը խօսին, կը կարդան ու կը գրեն հայերէն՝ դժբախտաբար տակաւին ոչ բաւարար կ'սփոյ, հայ ընկերընկերուհիներ կ'ունենան, որ յետագային կրնան զարգացնել ու վերածել մշտական բարեկամութեան եւ կամ նոյն իսկ՝ ամուսնութեան, հայոց պատմութեան, մշակութիւն, հայ արժէքներուն եւ հերոսական դէմքերուն կը ծանօթանան, հայոց ցեղասպանութեան եւ մեր դատին տեղեակ կ'ըլլան եւ այսպիսով իրենցմէ ոմանք կրնան որոշել պայքարիլ մեր դատին համար: Անոնց կը տրուի կամ պէտք է տրուի մանաւանդ հայու ոգին, որ եթէ դրոշմուի անոնց մէջ, անոնք պիտի հայ մնան նոյն իսկ օտար շրջանակներու մէջ:

Դեռ, հայ ամուսնութիւններ պիտի կնքեն, իրենց գաւակներն ալ յետոյ զրկելով հայկական դպրոց. ծնողները կրնան հանդիպիլ իրենց յարմար հայ ընտանիքներու եւ բարեկամանալ, կազմելով հայկական շրջանակ մը:

Հայ դպրոցները նաեւ կարելոր դեր կը կատարեն հայ ընտանիքներու իրար ծանօթացման գործընթացին մէջ, կազմելով ու զարգացնելով հայկական շրջանակներ:

Ուսումնական մարզին մէջ ալ լաւ արդիւնքներու հասան հայ վարժարանները. յաջող աշակերտները կրցան պատրաստուիլ որակաւոր համալսարաններ ընդունուելու համար եւ այդպիսով է որ ունեցանք մեր թիւով փաստաբաններ, բժիշկներ եւ ճարտարագէտներ:

Պէտք է աւելցնել թէ հայ վարժարանները հետեւելով հայ ժողովուրդի առաքինութիւններուն ժառանգութեան, կը հրամցեն հայ մանուկին ու պատանիին, շատ աւելի առողջ միջավայր մը, ուր կենկեր ու թմրանութ չկան, կոհու կամ

սպանութիւններ գոյութիւն չունին, ուր կը բացակային հագուածքի եւ կեցուածքի անվայել երեւոյթներ: Այս տեսակէտէն, նոյնիսկ շաբաթօրեայ հայ դպրոցները կրնան բարերար դեր ստանձնել մանուկներու կազմաւորման մէջ, եթէ լաւ ձեւով ծրագրուած ըլլան:

Կը լսենք որ հայկական չարթըր դպրոցներ բանալու ծրագրեր կան: Հիանալի գաղափար է եւ կը մաղթենք որ յաջողին, որովհետեւ բազմաթիւ հայ ընտանիքներ որոնք նիւթական տեսակէտով անկարող են իրենց գաւակները հայկական վարժարան զրկելու, այսպիսով կարելիութիւն պիտի ունենան օգտուելու չարթըրի այս անվճար դրութենէն, իրենց գաւակները զրկելով այդ դպրոցները ուր հայ լեզուին ուսուցումը եւ հայ մշակութիւն ծանօթացումը պիտի դառնան տիրական:

Հայ դպրոցներու մէկ կարեւոր բարիքը կրնանք նկատել նաեւ այն երեւոյթը որ անոնք գործ ու ասպարէզ կը տրամադրեն հարիւրաւոր նոր գաղթած ուսուցիչներուն կամ մշակութային գործիչներուն:

Անշուշտ, դպրոցը հայ ինքնութիւնը պահպանելու մարզէն ներս, անհրաժեշտ ազդակ մը ըլլալով հանդերձ, չի կրնար առանձինն յաջողութեան հասնիլ առանց ընտանիքի նեցուկին, որովհետեւ մանուկի մը դաստիարակութեան հիմը կը դրուի ընտանիքին մէջ, եւ հոն է որ կը թրծուի անձին նկարագիրը: Իսկ դպրոցէն յետոյ, շատ կարեւոր է նաեւ հայ ակումբը, որ ձեւով մը դպրոցին շարունակութիւնը պէտք է ըլլայ: Ակումբները մենաստիւթիւն պէտք չէ ընեն, չըլլան գլխաւոր, փառասիրութեան կեդրոններ: Ատենին, Պէյրութի մէջ կարեւոր դեր կատարեցին հայկական ակումբները, հայը հայ պահելու ուղղութեամբ, որովհետեւ ժողովրդային էին, եւ ունէին նուիրեալ առաջնորդներ որոնք իտէյալ ունէին:

Ընդունինք թէ հոս, Ամերիկայի մէջ ընտանիքներուն, դպրոցներուն եւ ակումբներուն դերակատարումը աւելի դժուար է այս հզօր երկրին զօրաւոր հոսանքին դէմ, բայց մեր ակումբները կրնան թումբ կանգնիլ ձուլումին դէմ, եթէ կարենան հրապուրել եւ հաւաքել մեր պատանիներն ու երիտասարդները, անոնց պատասխանատու գործեր վստահելով, փոխանակ խրտչեցնելու գանոնք եւ հեռացնելու: Ակումբներէն ներս կարեւոր է մշակութային եւ մարզական եռուզեռը:

Ուրեմն, ամփոփելով, հայ ընտանիքը, դպրոցը, ակումբները, եկեղեցին եւ հայ մամուլը գործակցաբար կրնան մեր հայ ինքնութիւնը պահել դեռ երկար ժամանակի մը համար, պայմանով որ այս օտար եւ դժուարին պայմաններուն մէջ, բոլորն ալ ունենան կարող, նուիրեալ, պարկեշտ եւ տեսլական ունեցող տնօրէններ, ուսուցիչներ, առաջնորդներ եւ մտաւորականներ:

Armenian General Benevolent Union Southern California District Committee proudly presents

A Celebration of the artistic genius of **Emil Kazaz**, Winner of the Lorenzo II Magnifico Prize in Sculpture at the Biennale Internazionale dell'Arte Contemporanea in Florence, Italy, December 2007.

With an extraordinary **Exhibition** of his latest work, sculptures, oil paintings, mixed-media and drawings. November 6-7, 2009, 7:30 - 10:30pm Sunday, November 8, 2:00 - 6:00pm

And a **Tribute** honoring the great artist Saturday, November 7, 2009, at 7:30pm sharp With the Participation of **Shahen Khachatryan**, art historian, author **Joe Lewis**, artist, educator, author **Vatche Mankerian**, concert pianist **Bakur Kalantaryan**, operatic tenor

Both events open to the public at AGBU Alex Manoogian Center 2495 E. Mountain St., Pasadena, California

Exhibited artwork is provided by Arian Dome of Fine Art, Inc.

The portion of the sales amount designated and provided as a donation to the AGBU will be deductible for income, gift, and estate purposes.



AGBU KAZAZ TRIBUTE

**ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ**  
1060 North Allen Avenue  
Pasadena, CA 91107  
Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով: Դեռաքրքրուողներէն հեռաձայնել՝ (626) 398-0506

Ձեր ճանուցումները Վստահեցէք  
«Մասիս» Շաբաթաթերթին  
T: (626) 797-7680 F: (626) 797-6863 massis2@earthlink.net



# «ՍԻՓԱՆ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲԸ ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԵԿԱՆ

## ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

1978 թվական: Հագիւ ոտք դրած Լոս Անճելըս, մէկ շաբաթ յետոյ կանգնեցի Ս. Յովհաննէս եկեղեցու փոքրաթիւ անդամներից կազմուած «Երգչախմբի» առջեւ: Շատ կարճ ժամանակ անց, աւելացաւ երգչախմբի անդամների թիւը եւ պահանջ առաջացաւ ելոյթներ ունենալ եկեղեցու պատերից դուրս:

Երգչախմբի անդամների ցանկու թիւնը՝ Պատարագի երգեցողութիւնից զատ հասարակութեանը ներկայանալ աշխարհիկ երգերով, դարձաւ նպատակ, դարձաւ հաւատամբ: Այդ տարիներին բոլորը չէ, որ աւտոմեքենայ ունէին: Մեքենայ ունեցողները սնէ-տուն ընկած, փորձի էին բերում մեքենայ չունեցողներին:

Գծուար չէր հասկանալ, որ երգչախմբի մեծաթիւ անդամներ, նոյնիսկ առանց երաժշտական գրագիտութեան եւ առանց երգչախմբային երգեցողութեան փորձառութեան, գալիս էին երգչախմբի փորձերին՝ հոգեկան քաւարարութիւն ստանալու համար: Հանդիպելով համերկայինների եւ համաքաղաքայինների հետ, երգելով հայրենական երգեր, նրանք փորձում էին յազեցնել հայրենիքի հանդէպ ունեցած կարօտի զգացումը, որ օրէ-օր աւելի էր ահագնանում նրանց հոգիներում:

Շուտով երգչախմբի շուրջը բոլորուեց հիմնականում Հայաստանից արտագաղթած երաժիշտներից կազմուած մի սենեկային նուագախումբ:

Առաջին համերգը տեղի ունեցաւ Ս. Յովհաննէս եկեղեցում՝ 1979 թվականի Սեպտեմբերի 9-ին, որի ծրագրում ընդգրկուած էին ինչպէս հոգեւոր, այնպէս էլ աշխարհիկ երգեր:

Երգչախմբի այդ համերգը եւ այլ փոքր-մոքր ելոյթներ սենեկային նուագախմբի ընկերակցութեամբ, նկարահանում էր Armenian Teletime նորաստեղծ հայկական առաջին կայանը, որը հիմնադրել էր Սարգի Մուրատեանը:

Նոյն տարուայ Հոկտեմբերի 7-ին «Սիփան»ի մի քանի մենակատարներ, սենեկային նուագախմբի ընկերակցութեամբ մասնակցեցին Հենրիկ Անասեանի եւ Իրանահայ Միութեան համատեղ գործակցութեամբ իրականացած՝ Կոմիտասի ծննդեան 110-ամեակին նուիրուած երեկոյին:

Այդ համերգի մենակատարներն էին Մարիետա Անասեանը, Վահէ Ղազարեանը, Յակոբ Թօփուգեանը եւ 15-ամեայ ջութակահար Արմէն Անասեանը: Ահա թէ ինչ է գրում այդ համերգի մասին Հրանտ Սիմոնեանը.

- Շատ լաւ կազմակերպուած եւ լուրջ երեկոյ մը ապրեցինք Կոմիտաս Վարդապետի հետ: Հենրիկ Անասեան այս ելոյթով նուաճեց Լոս Անճելըսի դժուարահաճ գեղարուեստասէրները:

Այդ արժանաչիշատակ համերգից յետոյ, որոշեցի երգչախմբին դուրս բերել լայն ասպարէզ: Երգչախմբի անդամների միահամուռ որոշումով երգչախմբին տրուեց «Սիփան» անունը:

Չնկրկելով նիւթական դժուարութիւնների առջեւ, «Սիփան» երգչախմբի յանձնախումբը, առանց որեւէ միութեան ու կազմակերպութեան հովանաւորութեան, նետուեց ասպարէզ՝ միշտ թիկունքին զգալով հայ համայնքի քաջալերանքը:

Եւ՝ առաջին խոշոր ձեռնարկը. 28 Սեպտեմբեր, 1980 թվական: Աննախընթաց երեւոյթ: Մինչ այդ երբեւէ չեղած համերգ՝ Լոս Անճելըսի յայտնի սրահներից մէկում:

Ուիլլըր Իբել թատերասրահում թեւածուծ է հայ երգը: Բեմում է գրեթէ 70 անդամներով համալրուած Սիփանն ու սենեկային նուագախումբը:

Լոս Անճելըսի այն օրերի համար բնական թուացող փոքրաթիւ մամուլը լայնօրէն արձագանքում է այդ նշանակալի իրադարձութեանը: Ահա թէ ինչ է գրում Նոր Օր շաբաթաթերթը 1980 թվականի Սեպտեմբեր 29-ի համարում.

- Ծրագրում կատարուող ստեղծագործութիւնները ունէին թեմատիկ բնոյթ. հիմնական թեման Հայաստանն էր, հայրենի երկիրը, նրա քարից հաց հանող, քարին շունչ տուող հայ շինականը: Իւրաքանչիւր ստեղծագործութիւն ստացել էր համապատասխան թեմատիկ վերլուծութիւն, շնորհիւ բազմալսատակ երաժիշտ-խմբավար Հենրիկ Անասեանի մեծ աշխատանքի եւ ստեղծագործական հնարամիտ ու լայն մտածողութեան:

«Սիփան» երգչախմբի համար գործունէութեան նոր դարաշրջան սկսուեց 1980-81 թվականներին, երբ այն դարձաւ Հ.Բ.Ը. Միութեան «Սարգարապատ» երգի-պարի հա-



### մոյթի հիմնական կորիզը:

Հնաբնակ լոսանճելըսահայերը լա՛ւ են յիշում 1980-84 թվականները, երբ քաղաքի նշանաւոր Scottish Rite երկու հազար նստատեղ ունեցող, հանդիսականներով լի սրահը պայթում էր ծափահարութիւններից Սարգարապատ-ի ելոյթի ժամանակ, իսկ դրսում, հարիւրաւոր երաժշտասէրներ տոմսակ չունենալու պատճառով վերադառնում էին տուն՝ այն յոյսով, որ ներկայ կը լինեն «Սարգարապատ»ի յաջորդ ելոյթին: Ահա թէ ինչ է գրում երաժշտագէտ Հայր Գրիգոր Հեպոյեանը «Սարգարապատ»ի առաջին համերգի մասին.

Փառք ու պատիւ նրանց: Անկասկած, ընդվզումի եւ վիրաւորաւածութեան, սեփական արժանապատուութիւնը բարձր պահելու գիտակցութիւնն էր պատճառը, որ «Սարգարապատ»ի երգչախումբը կրկին իր վրայ կրելով «Սիփան» անունը, մէկ օր իսկ չզաղարեցրեց իր գործունէութիւնը:

Երեսուն տարի շարունակ երգչախմբի կազմում են.

Մարիետա Անասեան, Արամ Անասեան, Գէորգ Տոյմաճեան, Պերճուհի Բզճեան, Վարուժան Դերձակեան, Բաֆֆի Թորոսեան, Ժիրայր Նիպիոսեան եւ Կարօ Մկրեան:

1980-ականի վերջերից «Սիփան» երգչախմբի կազմում ներգրաւուեցին տասնեակից աւելի սիրող եւ մասնագէտ երգիչ-երգչուհիներ, որոնք քսան եւ աւելի տարիներ իրենց կեանքը կապել են «Սիփան» ընտանիքի հետ:

Ահա նրանք. Հերմինէ Ամիրեան, Էվելինա Աւագեան, Մէրի Բաբիթեան, Նուէր Բանջարջեան, Մէրի Դերձակեան, Հիլդա Փիլիպոսեան, Յակոբ Աճէմեան եւ Անահիտ Յարութիւնեան:

Հինգ եւ աւելի տարիներ «Սի-

փան» երգչախմբին մասին են կազմել հիմնականում Հայաստանի անկախացումից յետոյ արտագաղթած գրեթէ երկու տասնեակ մասնագէտ եւ սիրող երգիչ-երգչուհիներ, որոնք լրացրին այն բացը, որ առաջացել էր վերջին տարիներին՝ մասնորոշեցող Անասեանի երկրորդ յաճախ բացակայելու, տարբեր երկրներում համերգներ տալու եւ, երգչախմբի մի քանի վաստակաշատ անդամների անժամանակ մահուան պատճառով: Տաս եւ աւելի տարիներ «Սիփան» երգչախմբի կազմում են. Ռուզաննա Դերմանեան, Ռիտա Պալթա, Սեդա Պողոսեան, Վերդինէ Քէչէկեան, Վազգէն Յովհաննիսեան, Սեդա Գրիգորեան եւ Անահիտ Յարութիւնեան:

Երկնքի արքայութեանն են արժանացել երգչախմբի լաւագոյն ուժերից.

Ալիս Լոմեան, Սարգիս Գաբոյեան, Սուրէն Մանուկեան, Հենրիկ Կարապետեան, Գէորգ Նալբանդեան, Երուանդ Աճեմեան, Կարինէ Կոստանեան, Աննա Նալբանդեան եւ Վահէ Մինասեան:

կամ կարդացել էր: Ոգեւորութիւնը մեծ էր, չէ՞, որ աշակերտներից իւրաքանչիւրը ի՛ր Երեւանը ներկայացնելու համար աշխատել էր ծնողների հետ միասին արթնացնելով հաճելի ու ջերմ յուշեր նրանց մէջ: Ցուցահանդէսը սկսելուց առաջ աշակերտներին ոգեւորեց վարժարանի տնօրէնը Պրն. Վարդգէս Գուրուեանը: Եւ աշակերտները խոստացան նորանոր ցուցահանդէսներով գեղեցիկ պահեր պարգեւել բոլորին:



# ԺՈՂՈՎ

## ՀԱՅ ԱԼԵՏԱՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Հայ Ալետարանական Համաշխարհային Խորհուրդի Գործադիր Ցանձնախումբը իր տարեկան ժողովը գումարեց Հայ Ալետ. Եփրատ Եկեղեցու մէջ, Փրաւիտընս, Րոտ Այլընտ, Ուրբաթ, 16 Հոկտեմբեր, 2009ին:

Խորհուրդը կազմող 7 կազմակերպութիւններէն ներկայ էին հետեւեալ անդամները: Վեր. Յարութիւն Սելիմեան, նախագահ, Վեր. Դոկտ. Վահան Յ. Թուրքիեան, գործադիր տնօրէն, Վեր. Ալետիս Պօյնէրեան՝ փոխ նախագահ, Վեր. Յովէլ Միքայէլեան՝ ատենադպիր, տիկ. Ճոյս Փիլիպոսեան Սթայն, տիար էնտի Թորիկեան, Դոկտ. Հրայր Ահարոնեան, Վեր. Յովսէփ Մաթոսեան, Վեր. Ռոնէ Լեւոնեան, Վեր. Ժիլպեր Լեւոնեան: Կամքէ անկախ պատճառներով կը բացակայէին Վեր. Մկրտիչ Գարակէօզեան, Վեր. Սամուէլ Կիրակոսեան եւ տիար Ալպերթ Մոմճեան:

Ընդունելի ետք օրակարգի հարցերը եւ վաւերացնելի ետք նախորդ ժողովի ատենագրութիւնը, Գործադիր Ցանձնախումբը նախ զբաղեցաւ նախորդ օրակարգէն մնացած հետեւեալ երեք նիւթերով.

1. Միջ-Միութեանական համաձայնութիւն Հայ Ալետ. Հովիւներու տեղափոխութեան հարցին մասին: Համաձայնագիրը կը վերաբերէր մասնաւորապէս Մերձաւոր Արեւելքի եւ Հիւսիսային Ամերիկայի Միութեան Հովիւներու տեղափոխութեանց մասին: Իր ենթալստիւններէն կողմէ պատրաստուած համաձայնագիր մը յղած էր Գործադիր Ցանձնախումբին ատենագրութեան, Ռան Թովմասեան: Յետ սերտորութեան, որոշուեցաւ շտաբակալութեամբ ընդունել սոյն համաձայնագիրը եւ յանձնարարել որ ոչ միայն Մերձաւոր Արեւելքի եւ Հիւսիսային Ամերիկայի, այլ Խորհուրդի անդամ միւս Միութիւններն ալ սերտեն եւ վաւերացնեն զայն:

2. Հայ Ալետարանական Եկեղեցին եւ Ալետարանական Գործը Պելճիքայի մէջ: Ամերիկայի Հայ Ալետարանականի, Ֆրանսահայ Ալետ. Միութեան եւ Եւրոպայի Հայ Ալետ. Ընկերակցութեան տեղեկագիրները ստանալէ ետք, Գործադիր Ցանձնախումբը որոշեց իր գնահատանքը հարողով Պրուքսէլի մէջ Հայ Ալետարանական Եկեղեցու համար եկեղեցաշէնք մը գնելու Ամերիկայի Հայ Ալետարանական Ընկերակցութեան ազնուական ժեստին համար: Նկատի ունենալով որ սոյն եկեղեցաշէնքը կը կարօտի աւելի քան 300,000.00 Եւրոյի նորոգութիւններու եւ բարեզարդման ծախսի, որոշուեցաւ կոչ ընել աշխարհափիւռ Հայ Ալետ. Եկեղեցիներուն, որպէս զի օժանդակութեան ձեռք կարկառուն իրենց քոյր եկե-

ղեցիին: 3. Պարտատի Հայ Ալետարանական Եկեղեցու Իրավիճակը: Պարտատի Հայ Ալետ. Եկեղեցին դիմած էր Մերձաւոր Արեւելքի Հայ Ալետարանական Եկեղեցիներու Միութեան անդամակցելու: Ժողովը վերահասու եղաւ որ Միութիւնը ընդունած է եկեղեցին որպէս օժանդակ անդամ եւ յառաջիկային կը ծրագրէ ընդունել անոր լիակատար անդամակցութիւնը: Որոշուեցաւ որ ջրուներ Պարտատի Հայ Ալետ. Եկեղեցու օժանդակ անդամ ըլլալու լուրը եւ աղօթել որ անոր լման անդամակցութիւնը կարելի դառնայ ժամանակի ընթացքին:

Որոշուեցաւ նաեւ յանձնարարել Հայ Ալետ. Եկեղեցիներուն որպէս զի թէ բարոյապէս եւ թէ նիւթապէս նեցուկ ըլլան անոր:

Գործադիր Ցանձնախումբը մասնաւորապէս խորհրդակցութեան նիւթ դարձուց նոր Օրակարգի հետեւեալ նիւթերը եւ արձանագրեց հետեւեալ որոշումները:

1. Որոշեց շտաբակալութեամբ ընդունել ՀԱՀԽ-ի նախագահ Վեր. Յարութիւն Սելիմեանի գեկոյցը իր գործունէութեանց մասին, ինչպէս նաեւ Գործադիր տնօրէն Վեր. Վահան Թուրքիեանի եւ Գանձապահ Տիար Ալպերթ Մոմճեանի գրաւոր տեղեկագիրները:

2. Որոշեց շտաբակալութիւն յայտնել Գործադիր Տնօրէն Վեր. Թուրքիեանին ՀԱՀԽ-ի արխիւներուն համար պատրաստած կարեւոր վաւերագիրներու եւ թղթակցութեանց իր հաւաքածոյին համար, որոնք ամփոփուած են 8 կազմուած հատորներու մէջ: Ի բացառելով 1992-1998 տարիներուն, սոյն հատորները կը պարփակեն Խորհուրդի 30 տարիներու իրադարձութիւններն ու պատմութիւնը:

Որոշեց նաեւ ինդըրել Ալետարանականի գրասենեակէն, որ ի սպաս դնէ 1992-1998 տարիներու թղթածրարները որպէս զի ՀԱՀԽ-ի արխիւներու ամբողջական հաւաքածոն կազմուի:

3. Նկատի ունենալով գրասենեակի վերաբերեալ տարուէ տարի աճող ընթացիկ ծախսերը՝

Որոշեց երկու հազար տոլարի յաւելեալ յատկացում մը ընել այդ մասին Յունուար 1, 2010 թուականին սկսեալ.

4. Հայաստանի մէջ վերջին երկու տասնամեայ իր կատարած գործունէութեանց մասին հակիրճ վերազնահատուած ընել է ետք, ժողովը շեշտեց կարեւորութիւնը եկեղեցական միութիւններու եւ Ալետարանականի փոխ-յարաբերութեան եւ համագործակցութեան: Գոհունակութեամբ արձանագրուեցաւ տեղական եկեղեցիներու հետզհետէ ինքնավար աշխատելակերպը: Ժողով

որոշեց յատկապէս իր գոհունակութիւնը յայտնել Վեր. Սամուէլ Կիրակոսեանի Հայց. Ալետ. Եկեղեցու նախագահ ընտրուելուն բարեբաստիկ առիթով: Ժողովը նաեւ իր երախտագիտութիւնը յայտնեց Հայաստանի ՀԱՀԽ-ի ներկայացուցիչ Վեր. Ռոնէ Լեւոնեանին Հայրենիքի մէջ վերջին 15 տարիներուն իր մատուցած ծառայութեանց եւ իր ցուցաբերած առաջնորդութեան համար:

5. Գործադիր Ցանձնախումբը խորհրդակցութեան նիւթ դարձուց Հայաստանի Հանրապետութեան

Սահմանադրութեան մէջ Ազգային ժողովի առաջադրած կրօնական ազատութեան վերաբերեալ փոփոխութիւնները, եւ անոնցմէ բխող աննպաստ հետեւանքները, ինչպէս նաեւ Եւրոպական Միութեան վերապահութիւնները սահմանադրական փոփոխութիւններու նկատմամբ: Յետ խորհրդակցութեան, ժողովը յայտնեց թէ լիալոյս է որ Հայաստանի Ազգային ժողովը վերատեսուութեան պիտի ենթարկէ Սահմանադրութեան մէջ ինդըրող առարկայ փոփոխութիւնները, եւ որոշեց որ այն պարագային ետք Ազգային ժողովը նախաձեռնէ նոր եւ նպաստաւոր օրինական փոփոխութիւններ որոշեցրել կրօնական ազատութեան վերաբերեալ, Հայց. Ալետ. Եկեղեցին պատրաստակամ է խորհրդակցութեան մասնակցելու:

6. ՀԱՀԽ-ի եւ Մայր Աթոռ Էջմիածինի փոխ-յարաբերութիւնը խորհրդակցութեան նիւթ դարձաւ Վեր. Յարութիւն Սելիմեանի եւ ԱՄՆեայն Հայոց Գարեգին Բ. Կաթողիկոս Մայիս 2009-ի երկխօսակցութեանց ետք: Որոշուեցաւ Նոյեմբեր 30, 2009ին Հայ Ալետ. պատուիրակութիւն մը ղրկել Էջմիածին՝ բարեկարգութեամբ Վեր. Յարութիւն Սելիմեանէ, Վեր. Դոկտ. Փօլ Հայտոսթեանէ եւ տիար էնտի Թորիկեանէ Մայր Աթոռ Ս. Էջմիածինի եւ Հայց. Ալետ. Եկեղեցիի հոգեւոր կապերը աւելի եւս ամրապնդելու եւ հասարակաց գործակցութեան մարզեր որոնելու առա-

ջադրութեամբ: 7. Հայաստան/Թուրքիա Դիւանագիտական յարաբերութիւններ հաստատելու նպատակով Հոկտեմբեր 10, 2009ի ստորագրած արձանագրութիւններու (Protocol) մասին տեղի ունեցան երկար խորհրդածութիւններ: Նկատի ունենալով իրենց բարեսիրական կազմակերպութիւններ ըլլալու հանգամանքը, Ալետարանականի եւ Փիլիպոսեան Հաստատութեան ներկայացուցիչները չմասնակցեցան խորհրդակցութեանց: Արդ ՀԱՀԽ-ի անդամ հինգ եկեղեցական միութիւնները չետ խորհրդակցութեան որոշեցին որ թէեւ կ'ողջունեն Թուրքիոյ եւ Հայաստանի միջեւ դիւանագիտական յարաբերութիւններու հաստատումը եւ երկու երկիրներու սահմաններու բացումը, սակայն ունին լուրջ մտահոգութիւններ Թրքական նախապայմաններու նկատմամբ, յատկապէս Թուրքիոյ տարածքային ամբողջականութեան ճանաչումի եւ Յեղասպանութեան հարցին վերաբնութեան առնչութեամբ, որոնք չեն ստարեր Հայկական Դատի հետապնդումի աշխատանքներուն:

8. Նկատի ունենալով ժամանակի սահմանափակումը, որոշուեցաւ որ ՀԱՀԽ-ի հինգ եկեղեցական Միութիւնները եւ երկու կազմակերպութիւնները իրենց տարեկան տեղեկագրութիւնները տան Ալետարանականի տարեկա համաժողովին, Հոկտեմբեր 17, 2010ին:

9. Որոշուեցաւ Գործադիր Ցանձնախումբի ժողովներ հիւրընկալող Փրաւիտընսի Հայ Ալետ. Եփրատ Եկեղեցու շտաբակալութիւն յայտնել:

10. Որոշուեցաւ ՀԱՀԽ-ի երկամեայ ժողովը գումարել Ամերիկայի Հայ Ալետարանական Ընկերակցութեան կեդրոնատեղին, (31 W. Century Rd. Paramus, NJ) Ուրբաթ, Հոկտեմբեր 15, 2010 թուականին:

Վեր. Դոկտ. Վահան Յ. Թուրքիեան  
Գործադիր Տնօրէն՝  
Հայ Ալետարանական  
Համաշխարհային Խորհուրդի

ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՓՈՒՈՆ ՓԱՓԱՔԻՆ ՎՐԱՅ

# ԳՐԻԳՈՐ ՍԱԹԱՄԵԱՆ

Կը Ներկայացնէ Իր Վերջին Ձուարճախօսութիւնը

## ՇԱՏ ՄԻ ՄԻՐԵՐ ԱՍԵԼ ԿԱՅ...

## ՇԱՏ ՄԻ ԱՏԵՐ ՄԻՐԵԼ ԿԱՅ...


Հոկտեմբեր 15  
2009-էն սկսեալ ամէն  
Հինգշաբթի երեկոները

### ՖԵՆԻՍԻԱ


Շքեղ ճաշարանին մէջ  
343 N. Central Avenue  
Glendale, CA 91203

Ճաշ (ժամը 7-8:30) եւ  
Ելոյթ (ժամը 9-ին) \$40  
Միայն Ելոյթ  
(ժամը 9-ին) \$20


Յատկապէս տեղեկութիւններու  
եւ Չեր տեղերը ապահովելու  
համար հեռաձայնեցէ՛ք  
Ֆենիսիա ճաշարանը  
(818) 956-7800



833 W. Glendale Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



**Dr. Missak Ekmekdjian**  
Chiropractor



**Dr. Anahid Ekmekdjian**  
Chiropractor

Մեծահասակներու եւ մանուկներու Բարբոփոքքի բուժում:  
Գլխացաւ, վզի, մէջքի, յօտային եւ մկանային ցաւեր:  
Ինքնաշարժի վթարի ետեւանքով պատաստած  
վնասուածքներու բուժում:

Չեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է



# ՅՈՎՅԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 140-ԱՄԵԱԿ ԳԻՔՈՐԻ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ԳԱՂՏՆԻՔԸ

## ԱԶԱՏՄԱԹԵԱՆ

Գրական գործը նախ եւ առաջ պիտի գնահատել հենց գրական արժանիքների տեսակէտից, ինչը սակայն շարքային ընթերցողին այնքան էլ չի հետաքրքրում: Նա դրանք ընկալում է բնագոյաբար, կամ եթէ կ'ուզէք, ենթագիտակցաբար, մանաւանդ եթէ խօսքը թուամանանի «Գիքորը» պատմութեան մի ստեղծագործութեան է վերաբերում: Կարելի է ասել, որ նման գործերը հենց այդպէս բնագոյով ու ենթագիտակցութեամբ էլ գրւում են: Թուամանանական պատմութեան գալիս է հազարամեակներից: Նա, եւ դա հենց նրա լաւագոյն գործերի մեծագոյն արժանիքն է, ոչինչ չի ստեղծում, ձեւի եւ բովանդակութեան հակադրութեան ու միասնութեան մասին չի մտածում, նա պատմում է այնպէս, ինչպէս իր պայերն են արել, եւ կարողանում է խուսափել «գրականուհին անելու» գայթակղութիւնից: «Գիքորը» խօսք ու պատմութեամբ լինելուց առաջ երաժշտութիւն է, հին-հին ժամանակներից՝ հայկական էպոսից ու հեքիաթներից եկող մեղեդի, որն իր հերթին, թուամանանական «անտենայով» հզօրացած արձագանքում ու ծփում է արեւելահայ արձակի վրայ, Բակունցից մինչեւ Հրանտ Մատթէոսեան:

Լինում է, չի լինում, մի մարդ ու կին (հեքիաթ):

Գիւղացի Համբոյի տունը կռիւ էր ընկել (թուամանեան):

Կաքաւաբերդի գլխին տարին բոլոր ամպ է նստում (Ակսէլ Բակունց):

Լենինականի հին թաղերից մէկում, ձորի բողբոջում, որն ամենայն իրաւամբ դեռ կարող էր կրել Գիւմրի անունը, մեռնում էր աղբիւրների հոշակաւոր վարպետ՝ ուստա Մկրտիչը (Մկրտիչ Արմէն):

Ոչխարի հօտը մակաղել էր թաղթուն սարի լանջին (Սերո Խանգաղեան):

Սարի գլխին մի կտոր սպիտակ սառույց կար (Հրանտ Մատթէոսեան):

Կարծում եմ, որ գրեթէ պատահաբար ընտրուած տարբեր գրողների վերը բերուած սկզբունաւորումների մէջ լսում է «Գիքոր»-ի առաջին տողի արձագանքը:

Եւ այսպէս, թուամանանական արձակի չափ ու կշռոյթով ստեղծուել է մի ամբողջ գրականութիւն, ինչը, ինչքան էլ տարօրինակ թուայ, չենք կարող ասել նրա բանաստեղծութեան մասին, քանզի թուամանեանի բանաստեղծութիւնն էլ հիմնականում պատմապիսի է, մինչդեռ նրանց անմիջապէս յաջորդող Յովհաննէս Յովհաննիսեանը, Ա. Իսահակեանը եւ Վահան Տէրեանը քնարական բանաստեղծներ էին, այնպէս որ կարելի է ասել, Ամենայն Հայոց Բանաստեղծը որպէս բանաստեղծ յետնորդ չունեցաւ, այլ շարունակուեց որպէս արձակագիր, իսկ դրանում շատ մեծ է «Գիքոր»ը պատմութեամբ դերը:

Ինչ վերաբերում է այս պատմութեամբի համաժողովրդական ընդունելութեանը, թուում է թէ դրա պատասխանը պիտի ամէն բանից առաջ որոնել հայոց ազգային հաւաքական հոգեբանութեան մէջ: «Գիքորը», ինչպէս եւ թուամանեանի բոլոր հերոսները, ոչ թէ եզակի անհատ են, այլ հաւաքական կերպար: Դա դարերով անպաշտպան



ու անապահով կեանքով ապրած հայ, հիմնականում գիւղացի զանգուածի ողբերգութեան մարմնաւորումն է: «Գիքորը», դա պանդուխտ հայն է, սպառնալից ու օտար աշխարհի դէմ, ծեծուած, արհամարհուած, անլեզու, խեղճ: Նա միայն գիւղացին էլ չէ, նա հայն է ընդհանրապէս: Հայը, որին իր ծնողը, իր ծննդավայրը, գիւղը, երկիրը կեանք է տուել, բայց պաշտպանել չի կարողանում: Ամենեւին էլ պատահական չէ, որ կոմիտասն ու թուամանեանը տարեկիցներ են, եւ որ նա մշակել ու հային է վերադարձրել «Կոունկ»ն ու «Անտունի»ն, իսկ սա՝ «Գիքորն» ու «Հառաչանքը»: Պանդուխտը դարեր շարունակ եղել է հայ ժողովրդական բանահիւստութեան գլխաւոր հերոսներից եւ մշակողներից մէկը: Իսկ գրականութեան աշխարհականացումից ի վեր, ահա աւելի քան 150 տարի, անգամ սեփական հայրենիքում պանդուխտ լինել եւ մասնաւորապէս, թէկուզ հայրենիքում, գիւղից քաղաք աքսորուելու տապառանքը, մնում է հայ գրականութեան գլխաւոր թեման: Այլ խօսքով այդ գրականութիւնը այսպէս կամ այնպէս կրկնում է իրեն եւ կամայ թէ ակամայ ձախողեցնում է կախարդական օղակից դուրս պրծնելու այնպիսի փորձերը, ինչպիսին ասենք Չարենցիին էր:

Եւ այսպէս, «Գիքոր»-ի յաջորդութեան գաղտնիքը նրանումն է, որ ամէն հայ իր հոգու ամենախորքում մի Գիքոր է: Եւ դեռ այդ պատմութեամբը գրուել է Մեծ Եղեռնից 20 տարի առաջ: Գիքորական սարսափը թշնամի աշխարհի դիմաց արտայայտուած է նոյն թուամանեանի մշակած մի այլ ժողովրդական հեքիաթի՝ «Կիկոսի մահը»-ի մէջ: Ըստ էութեան, խորապէս հոգեբանական այս գրոյցը կարելի է «Գիքոր»-ի նախատիպը համարել: Աղէտի սուր կանխագագացումը, որն արդիւնքն է դառն կենսափորձի, դառնում է իրականութիւն:

Եւ չգիտեմ իրապէս ինչ են զգում, ասենք, Ռուսաստան, թէ ԱՄՆ եւ այլուր գաղթած հայաստանցի հայերը, բայց կարող եմ ասել, որ Կլենտոնջիում հաւաքուած իրանահայերը գիքորական շատ բան պիտի ունենան իրենց մէջ: Աւելի ցաւալին այն է, որ Հայաստան ներգաղթողներն էլ են տառապում գիքորախտով, ինչպէս էր պարագան շատ իրանահայերի, որոնք լքեցին դարեր երազած իրենց (բայց արդեօք իրենց) հայրենիքը,

# ՅՈՒՇԵՐ ՄԻԹԻՆԳ ԵՐԵՒԱՆՈՒՄ

## ՅԱՐՈՒԹԻՒՆ Ա.Ի. ՔՉՆՅ. Տ. ՄԵՍՐՈՊԵԱՆ

Երեւանի Ս. Պօղոս-Պետրոս եկեղեցին համարում էր մայրաքաղաքի ամենազեղեցիկ եկեղեցիներից մէկը, որի հսկայական զանգերի ձայնը թնդացնում էր Երեւանը եւ արձագանգը գնում հասնում էր մինչեւ Նորք, Քանաքեռ եւ աւելի հեռուներ: Առաւօտ, երեկոյ, ամենայն կանոնաւորութեամբ հնչում էին եկեղեցու զանգակները եւ հատուտացեալներին աղօթքի հրաւիրում:

1928 թիւն էր: Արեւմտեան պողոտայի վրայ գտնուող նորակառույց կարմրագոյն հիւրանոցի առջեւ միթինգ էր կազմակերպուած, որտեղ ներկայ էին պետական դէմքեր, ինչպէս նաեւ հիւրեր՝ միւս հանրապետութիւններից: Դժբախտաբար չեմ յիշում թէ ինչի՞ առթիւ էր կազմակերպուած այդ լայնածաւալ միթինգը, որին ներկայ էին մի քանի հազար հոգի:

Կիրականում էր: Ս. Պօղոս-Պետրոս եկեղեցու հոգեւոր հովիւ Տ. Ղեւոնդ Քչնյ. Աղամեանի հետ կանգնել էինք եկեղեցու բակում: (Ես տիրացուի պաշտօն ունէի):

Դրսում աղմուկ, իրարանցում կար: Անվերջ բացազանցութիւն եւ ծափահարութիւններ: Երեկոցեան սովորական ժամին, եկեղեցու ժամկոչ Սամուէլը հնչեցրեց զանգերը՝ բարձր ու քաղցրալուր:

Յանկար, եկեղեցու մեծ դարպասից, վազելով, հեւասպառ ներս մտան երկու երիտասարդներ եւ գրեթէ պոռպոլ ազդարարեցին մեզ.

- Միթէ չէ՞ք տեսնում որ դրսում միթինգ կայ, ինչո՞ւ էք

այնտեղ տասնամեակներ ապրելուց յետոյ:

Այստեղ կարելի է դնել մի այսպիսի հարց եւս, արդեօք գիւղից քաղաք փոխադրուած կամ սփիւռքում յաջողած հայեր չկա՞ն կամ չե՞ն եղել: Ի հարկէ եղել են, բայց նրանք, եթէ մտել են գրականութեան մէջ, ապա հիմնականում որպէս բացասական կերպարներ: Յաջողութիւնը, յատկապէս ստեղծականը, ներկայացուել է որպէս հակաարժէք եւ ընդհակառակը, թշուառութիւնը՝ արժանիք: Սա գուցէ եւ ինքնին ազգային յատ-

զանգերի ձայնով խանգարում մեր միթինգը, իսկոյն դադարեցրէք զանգերի ձայնը...

Տէր Ղեւոնդ քահանան ու ես մի պահ շշմած իրար նայեցինք: Ի՞նչ կարելի էր անել, միթէ կարելի էր հակառակել եղած հրահանգին: Ստիպուած զանգահարութիւնը դադարեցրինք եւ երիտասարդ տղաները բաւարարուած զգալով իրենց, հեռացան:

Երիտասարդների հեռանալուց հազիւ մէկ-երկու րոպէ էր անցել, մենք դեռ լրիւ չէինք սթափուել, երբ միեւնոյն դարպասից ներս մտաւ թխաղէմ, լեցուն կազմուածքով եւ առոյգ մի երիտասարդ իր թիկնապահներով, որը հաստատուն քայլերով, մօտեցաւ մեզ, բարեւեց եւ կէս զայրացած տոնով հարցրեց.

- Ինչո՞ւ դադարեցին եկեղեցու զանգերը...

Տէր հայրը բացատրեց, որ երկու երիտասարդներ ներս մտան եւ կարգադրեցին զանգերը դադարեցնել, առարկելով, որ խանգարում են միթինգին:

Նորեկի դէմքը մթազնեց, աչքերը աւելի զայրացկոտ փայլ ստացան, ապա հազիւր իր զայրոյթը ծածկելով ասաց.

- Ո՛չ ոք իրաւունք չունի արգելելու զանգերի ղօղանջումը, ո՛չ ոք իրաւասու չէ միջամտելու եկեղեցական գործերին, դուք ձեր գործին կացէք, ես կարգադրում եմ որ հենց հիմա զանգերը զարկէք...

Այս ասելով, նա թեքուեց ու դուրս գնաց եկեղեցու բակից: Քահանան ու ես, շշմած նայում էինք նրա ետեւից:

Հայաստանի թիւ մէկ մարդը՝ Աղասի Խանջեանն էր նա:

կաննիչ չէ, դեռեւս Յիսուս Քրիստոսն էր բացառում հարուստների մուտքը երկնային արքայութիւն, բայց անմեղ գոհի պաշտամունքը չափազանց խորն է նստած հայի հոգում, այնքան, որ դրանից հրաժարումը կարող է համարուել ազգային դաւաճանութեան նման մի բան, բայց եւ այնպէս, Համբոյների եւ Գիքորների բախտ որոնելու եւ այս աշխարհում երջանկութեան իրենց բաժինը նուաճելու ձգտումը մնում է նրանց անկապտելի մարդկային իրաւունքը:

«Յոյս» երկշամաբերք, Թեհրան

**ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ**  
 ՀԵՌՈՒՍՏՍԵՍԻԼԻ ՅԱՅՏԱԳԻՐԻ  
 ԺԱՄԱՆԱԿԱՑՈՅՑԸ  
 CHARTER CABLE 280-ՐՂ ԿԱՅԱՆ  
 (ԿԼԵՆՏԵՅԼ, ՊԵՐՊԵՆՔ, ԼԱ ՔՐԵՍԵՆԹԱ)  
 GLOABCAST SATELLITE  
 ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՐԵՎՈՅԵԱՆ ԺԱՄԸ 10:00-11:00

**ՔԱՉ ՆԱԶԱՐ**  
 ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ  
 Ամէն Կիրակի երեկոյեան  
 Ժամը 10:00-ից 12:30  
 Կլենտոնյի 280-րդ կայանից



# ԻՐԱՆԱՀԱՅ ԳԱՂԹՕՃԱԽԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ ԵՐԵԿ ԵՒ ԱՅՍՈՐ (ՀԱՄԱՌՕՏ ԱԿՆԱՐԿ)

**ՆԵՐՍԷՍ Ս. ՄԵՍՐՈՊԵԱՆ (ԲԱԼԱՅԵԱՆ)**  
(Շարունակում նախորդ թիվին)

## ՄԱՄՈՒԼ

Հայ առաջին թերթը տպագրուել է 1794 թվականին, «Ազդարար» անունով, Շիրազեցի Տէր Յարութիւն Քանյ. Շմառնեանի միջոցով, Հնդկաստանի Մատրաս քաղաքում: Տէր Հայրը, ծնուել էր 1750 թվականին Շիրազում: Թերթը լոյս է տեսել հազիւ 18 թիւ գրաքար, խառնուած Ջուղայի բարբառի հետ: Ի դէպ, 1994ին նշուեց հայ մամուլի հիմնադրման 200-ամեակը:

Իրանի առաջին հայ թերթը կոչուել է «Շաւիղ» որ լոյս է տեսել 1894 թվականին Թեհրանում: Ապա Նոր Ջուղայում լոյս է տեսել «Նոր Ջուղայի Լրագրեր»: Թաւրիզի «Գործ» թերթը տպուել է միայն մէկ թիւ: Թաւրիզում սկսել է տպագրուել «Ազդարար Առաջնորդարանի» թերթը 1904 թվականին: 1896 թվականին լոյս է տեսել Թեհրանի 2-րդ թերթը «Աստղ Արեւելեան», շաբաթաթերթը, որն վեց ամսուայ կեանք է ունեցել:

Ապա Թեհրանում եւ Թաւրիզում սկսել են լոյս տեսնել «Առաւօտ», «Զանգ», «Մինարէթ», «Բոբոխ», «Ալիք», «Յախաւել», «Վերածնունդ», «Նոր Հասկեր», «Արուսեակ», «Աշխատանք», «Պահակ», «Նոր Այգ», «Նաւասարդ», «Լոյս», «Արփի», «Արմենուհի», «Հուր», «Փիւնիկ», «Լուսաբեր», «Արեւելք», «Վերելք», «Հակաֆաշիստ», եւ այլ թերթեր (օրաթերթ, շաբաթաթերթ, ամսագիր), շուրջ 100 անուն:

1920 թվականին հմուտ թարգմանիչ-երգիծաբան Հայկ Գարագաշը հիմնում է «Բոբոխ» երգիծաթերթը, որն 8-ը տարուայ կեանք է ունենում: Հ. Գարագաշը առաջին անգամ լինելով 1927-29 եւ 30 թվականին լոյս էրնծալում «Պարսկահայ Տարեցոյցը»: Տարիներ յետոյ Տաճատ Պողոսեանի միջոցով հրատարակուել է «Ռաֆֆի» տարեգիրքը՝ 2 թիւ միայն:

1930 թվականին նորէն Հայկ Գարագաշի խմբագրութեամբ սկսում է լոյս տեսնել «Վերածնունդ» օրաթերթը, որն շարունակուել է մինչեւ 1953 թվականը: 1933 թվականին Թեհրանում հրատարակուել է «Ալիք»ը նախ շաբաթաթերթ, ապա երկօրեայ եւ վերջապէս օրաթերթ, եւ շարունակուել է մինչեւ այսօր:

Այժմ Թեհրանում լոյս են տեսնում «Ապագայ» ամսագիրը, «Լոյս» երկշաբաթաթերթը, հմուտ թարգմանիչ էրիկ Բաղդասարեանի (է. Գերմանիկ) խմբագրութեամբ, «Արաքս» շաբաթաթերթը, հասարակական գործիչ Մովսէս Քէչիշեանի միջոցով, «Յոյս» երկշաբաթաթերթը, արտօնատէր բարերար Լեւոն Ահարոնեան, «Պայման» եռամսեան եւ այլն:

1943-1958 թվականներ Թեհրանում հրատարակուել է Իրանահայ 2-րդ երգիծական հանդէսը, «Յախաւել» երկշաբաթաթերթը, երուանդ Բագէն Միրզայեանի խմբագրութեամբ: Ի դէպ, տողերիս գրողը իր երգիծական առաջին փորձերը «Յախաւել»ից է սկսել է եւ խմբագիրը իրեն վերանուանել է Խարտոց Հարթոցեան: Պիտի նշել որ 1970 թվականին Լոս Անճելըսում սկսում է լոյս տեսնել «Քաջ Նազար» երգիծաթերթը, որն իր ճոխ բովանդակութեամբ եւ ժրջան Յովհաննէս Բալայեանի ջանքերով այսօր լաւ տպաքանակ ունի: Ի դէպ այս տարի «Քաջ Նազար»ի 40-ամեակը կը նշուի թէ մայր հայրենիքում եւ այստեղ Միացեալ Նահանգներում: Պարզ է որ, «Քաջ Նազար»ը եւս պատկանում է Իրանահայ մամուլի ընտանիքին:

## ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐ

Բազմաթիւ մշակութային, մարզական, բարեգործական միութիւններ են եղել ու կան Թեհրանում եւ Իրանի հայաբնակ բոլոր քաղաքներում եւ գիւղերում: Յիշենք Թաւրիզի «Մասուցի Դաւիթ» բազմանդամ միութիւնը, Թեհրանի Լոյս եւ Միտք, Մշակոյթ, Հորիզոն, Հայրենիք, Իրանահայ Ազգային-Մշակութային (Ի.Ա.Մ.Մ.) Մանահին, Սիփան, Նայիրի, Արարատ, միութիւնները: Ապա Չհարմահալի Ուսումնասիրաց, Փերիոյ Կրթասիրաց, Հայ Համալսարանաբանականների, Հայ Կին, Հայ Գրողների միութիւնները եւ կազմակերպութիւնները:

Թեհրանում աշխոյժ գործունէութիւն ունի Հայ Բարեգործական Ընդհ. Միութիւնը իր Մարի Մանուկեան, Նուարդ Գիւլբէնգեան դպրոցներով եւ կենտրոնով:

1961 թվականին հիմնուել է Իրանահայ Գրողների Միութիւնը որն թէեւ այսօր թուական նուագում է ունեցել, բայց եւ այնպէս գրական աշխատանք է տանում: Կայ նաեւ

«Գրական շրջանակ»ը, որտեղ համախմբուած են մի շարք գրողներ: Իրանի Մալմաստ գաւառի Փայաշուկ գիւղում է ծնուել Մեծն Ռաֆֆին: Գիւղում դեռ հաստատուել է իր պապեանական տունը: Ի դէպ Ռաֆֆին վախճանուել է Ապրիլի 24-ին, 1888 թվականին:

Պարսկահայ ծագում ունի հանճարեղ եղիշէ Չարենցը, որի պապերը եկել են Իրանի Մակու քաղաքից: Իրանահայ է Շէյքսպիրի անգլագական թարգմանիչ, պետական գործիչ, դիւանագէտ Յովհաննէս Խան Մասէհեանը: Իրանացի է հմուտ թարգմանիչ Յովսէփ Միրզայեանը: Ինչպէս նաեւ Աշոտ Մինասեանը:

1930-ին ասպարէզ է գալիս «Նոր էջ» գրական խմբակը, արձակագիր Հրայր Ֆալեանի եւ Արշալիր Մկրտիչի նախաձեռնութեամբ, որ երկար տարիների կեանք է ունենում: «Նոր էջ»ին են միանում հետագային Դեւր, Գալուստ Խանենցը, Չորիկ Միրզայեանը, Աշոտ Ասլընը, Արա Տ. Յովհաննէսեանը, Ռ. Բէնը, Վարդգէս Ֆրանգեանը, իսկ աւելի ուշ Սոնիա Բալասանեանը:

«Նոր էջ»ն ունենում է 35 հրատարակութիւն: Նոր էջականները իրենց գրական փորձերն սկսում են Հ. Գարագաշի «Վերածնունդ» թերթից, այնտեղ ունենալով իրենց յատուկ էջը եւ որին անուանում են Նոր էջ:

## ԹԱՏՐՈՆ-ՇԱՐԺԱՆԿԱՐ-ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Այս տարի Թեհրանում նշուեց Իրանի շարժանկարի 100-ամեակը: Պիտի նշել որ շարժանկարի կարգուսարքը առաջին անգամ Իրանէ բերուել մի քանի հայ արուեստագէտների կողմից: Իրանական առաջին ժապաւէնը պատրաստել է Աւահէս Օհանեանը 1931 թվականին լայն յաջողութիւն է ձեռք բերել: Ապա ֆիլմարուեստով են զբաղուել մէկ տասնեակից աւելի հայեր: Դրանց թվում իշխեց Մուշեղ Սարվարեանը, Սամուէլ Խաչիկեանը, ժողգէֆ Վալցգեանը, որոնք գարկ են տուել ֆիլմարուեստի զարգացումին Իրանում: Այս առթիւ իրենց կարեւոր ներդրումն են ունեցել դերասաններ Արմանը, Վահանը եւ Արամալիս Աղամալեանները, եւ շատ շատեր: Հայ բեմադրիչների միջոցով հիմնուեցին բազմաթիւ կինօտուդիաներ, որոնցից մի մասը դեռ աշխատում է մինչեւ այսօր: Հայ բեմին ծառայել են դերասաններ Մանուէլ Մարութեան ամուսինները, Կոստանեանները, Մանուկեանը, Ահարոնեանը, Թաշճեանը, Սարգիս Սվաճեանը, Էրիկ Ասլանեանը,

Սուրէն Մնացականեանը, Սուրիկ Բաղդասարեանը, յայտնի կատակերգակ Թուրնի Ամատունին, որոնց մասին մի աշխատութիւն ունի Իրանահայ լրագրող-բանասէր Արսէն Մամեանը:

## ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Իսկ երաժշտական ասպարէզում կարեւոր դեր է ունեցել Թաւրիզում՝ Լեւոն Գրիգորեանը, դաստիարակելով երաժիշտների մի մեծ խումբ, այդ թվում Համբարձում, Ադամ եւ Ռուբիկ Գրիգորեանները եւ ուրիշներ: Իրանահայ երաժշտութեանը խոշոր ծառայութիւն են մատուցել երգահաններ Նիկոլ Գալանդաբեանը, Աշոտ Պատմագրեանը, երգիչ-երգչուհիներ Սաթօ Աղաբաբեանը, Ասիա Կոստանեանը, Լորիկ Մովսէսեանը, Արա Ա. Յովհաննէսեանը, Աշոտ Պողոսեանը եւ շատ երգիչ-երգչուհիներ:

Վերջին տարիների խմբավար-երգահաններից յիշենք Գուրգէն Մովսիսեանը, Ժորա Մինասեանը, Յովիկ Գասպարեանը, Ալէք Բագուկեանը, Գագիկ Բարխուդարեանը, Տիգրան Սուքիասեանը եւ մի շարք երիտասարդ խմբավարներ:

Ունեցել ենք շնորհալի դիրիժորներ յանձինս Լորիս Ճգնաւորեանի եւ Արամ Ղարաբէգեանի, որոնք հաստատուելէն մայր Հայրենիքում:

Իսկ պարարուեստի եւ բալէի ասպարէզում խոշոր ներդրում ունեցան վաստակաւոր Ելէնա Աւետիսեանը, եւ պարարուեստի վարպետ Սարգիս Զանբաղեանը, որոնք Թեհրանում հիմնադրուել էր ճանարուեստի այդ ճիւղերի:

## ԻՐԱՆԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Պարսկաստանը դարերից ի վեր եղել է եւ մնում է որպէս Հայ մշակույթի մի կենտրոն: Իրանի շուրջ 100 առաքելական եկեղեցիների, Ս. Թադէ, Ս. Ստեփանոս, Ս. Ամենափրկչեան վանքերը եղել են ու կան որպէս հայ բան ու բառի կենտրոններ: Նոր Ջուղայում կանգուն է Ս. Ամենափրկչեան վանքը՝ որտեղ կան հազարաւոր գրքեր, ինչպէս նաեւ ձեռագիր մատենաներ: Ջուղայում կան 12 եկեղեցիներ եւ 5 վարժարաններ: Իրանի առաջին տպարանը, որն կոչուել էր վանքի անուամբ, այսօր ունի արդիական սարքաւորում: Ջուղան լինելով Իրանահայ մշակույթի կենտրոն, 1959 թվականին երբ Իրանի արքան այցելում էր վանքի մատենադարան-թանգարանը, անմիջապէս

Շարք էջ 19



Authorized Agent  
**Blue Shield of California**  
An Independent Member of the Blue Shield Association



**A.B.A. INSURANCE SERVICES**

# SERVING SINCE 1975

## BEDROS S. MARONIAN

(818) 500-9585  
CA LIC. #0494056 • BMaronian@AOL.com  
FAX 500-9308 ABA INSURANCE SERVICES 805 E. Broadway . Glendale, CA 91205

ԵՐՔԵՔ ՈՒՇ ԶԵ ՎԵՐԱՔՆՆԵԼՈՒ ՁԵՐ ԱՊԱՌՈՎԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ





### «ԱՐՏԱԻԱԶԴ» ԹԱՏԵՐԱԽՈՒՄԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԱՐԱ ՊԱՊԱՅԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ (Որոշյապաւումներով)

Անուրանալի ծանօթ իրողութիւն է թէ Հ.Բ.Ը. Միութիւնը աւելի քան 100 տարիներէ ի վեր կը շարունակէ ծառայել հայ ժողովուրդին:

1979-ին խումբ մը նուիրեալ միութենականներ եւ գործիչներ Հայկ Մարտիան, Բարսեղ Գարթաւեան եւ Գրիգոր Սաթամեան անհրաժեշտ նկատեցին հիմնելու Հ.Բ.Ը. Միութեան՝ Արտաւազը թատերախումբը՝ զարգացող Լոս Անճելըսի հայ գաղութին համար:

Թատերախումբը ունեցաւ բազմաթիւ հիւր եւ մնայուն բեմադրիչներ:

Հ. Բ. Ը. Միութեան Ամերիկայի Կեդրոնական Վարչական Ժողովի որոշումով, 1987-ին Միութեան Ամերիկայի գեղարուեստական տնօրէն՝ Գրիգոր Սաթամեան, ստանձնեց «Արտաւազը» թատերախումբի գեղարուեստական ղեկավարի եւ բեմադրիչի պաշտօնը:

«Արտաւազը» թատերախումբի միջոցաւ եւ ի պատիւ տաղանդաշատ դերասանապետ՝ Գրիգոր Սաթամեանի անսակարկ նուիրումին, թատերախումբը ունեցաւ սերնդափոխութիւն: Փորձառու դերասաններու կողքին պատանի եւ երիտասարդ ուժեր հրաւիրուեցան մաս կազմելու թատերախումբին:

Անոնք թատերական ձիրքերը յայտնաբերուեցան եւ զարգացան շնորհիւ մեր բեմադրիչի աշխատանքին:

Յարաբերաբար կարճ այս ժամանամիջոցին, «Արտաւազը» թատերախումբը ոչ միայն տեղուց մշակութային կեանքը ճոխացուց աւելի քան 55 ելոյթներով, այլ նաեւ Հիւսիսային Ամերիկայի եւ Քանադայի մէջ կրկնեց իր թատերադերը, արձանագրելով աննամանամիջոցին, «Արտաւազը» թատերախումբը ոչ միայն տեղուց մշակութային կեանքը ճոխացուց աւելի քան 55 ելոյթներով, այլ նաեւ Հիւսիսային Ամերիկայի եւ Քանադայի մէջ կրկնեց իր թատերադերը, արձանագրելով աննամանամիջոցին:

### ՀԱՇՈՒԵՂԱՐԴԱՐ

#### «ԱՐՏԱԻԱԶԴ» ԹԱՏԵՐԱԽՈՒՄԻ ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳՐԻԳՈՐ ՍԱԹԱՄԵԱՆԻ ԵԼՈՅԹԸ, ՅԱՊԱՒՈՒՄՆԵՐՈՎ

Յարգարժան ղեկավարներ Հ.Բ.Ը. Միութեան, սիրելի դերասաններ, թէքնիք աշխատողներ, վարչական անդամներ եւ յարգելի ներկաներ:

Այսօր երեսուն ամեակն է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան «Արտաւազը» թատերախումբի հիմնադրութեան: Նախ եւ առջ փառք կու տամ Աստուծոյ որ ինձի շնորհեց առողջութիւն, ուժ եւ կորով 50 տարի ծառայելու հայ թատրոնին եւ իմ համեստ նպաստ բերելու անոր զարգացման ու կազմաւորման, պիւրիքի դժուարին պայմաններուն մէջ: Խորհին շնորհակալութիւն կնոջ Մատլէին եւ տղուս Լեւոնին իրենց ներողամտութեան անսահման համբերութեան համար: Հազար փառք Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան եւ անոր հեռատես ղեկավարներուն որոնք հաւատացին թատերական շարժումի առաքելութեան եւ անվերապահ կերպով թիկունք կանգնեցան անոր գոյատեւման:

Ինձի համար մեծ հաճոյք եղաւ աշխատել հարիւրաւոր երիտասարդ եւ երիտասարդուհիներու հետ, վայելելով անոնց վստահութիւնը եւ բարեկամութիւնը, սէրն ու գուրգուրանքը: Տարիներու ընթացքին մեր միջեւ ստեղծ-

խընթաց յաջողութիւն եւ արժանանալով անվերապահ գնահատանքի:

Հայ արուեստագէտներու փառանքի մը նուիրումով եւ յաջողելու հաստատակամ վճռակամութեամբ կեանքի կոչուած այս թատերախումբը պարծանքն է այս համայնքին:

Այս առիթով մեր խորին շնորհակալութիւնները կ' ուզենք յայտնել, յոբելինական այս ձեռնարկի նախագահ, ազգային բարերար Հ.Բ.Ը. Միութեան եւ Հ.Ն.Ը.ի Երիտասարդական գործունէութիւններու ջատագով՝ պրն. Ալլախր Պոյաճեանին, որ միշտ թիկունք կանգնած է եւ քաջալերած է «Արտաւազը» թատերախումբի գործունէութիւնները, նիւթապէս եւ բարոյապէս:

Շնորհակալութիւն մեր այսօրուայ գլխաւոր բանախօսին, պրն. Սարգիս Մինասեանին, որ իր բազմամեայ փորձառութեամբ լաւագոյն մտաւորական պիտի ըլլայ արժեւորելու մեր թատերախումբի 30-ամեայ գործունէութիւնը:

Մեր շնորհակալութիւնները կը յայտնենք Հ.Բ.Ը. Միութեան Կեդրոնական վարչութեան, Հարաւային Գալիֆորնիոյ Շրջանակային Յանձնաժողովին, թատերախումբի բոլոր դերասան-դերասանուհիներուն, թէքնիք անձնակազմի անդամներուն եւ վարչութեան անդամներուն, իրենց անսակարկ գոհողութիւններուն համար:

Յատուկ շնորհակալութիւն մատուցին, որ լալն ձեռով կ'արձագանքէ մեր թատերախումբի յաջողութիւններուն եւ ձեզի սիրելի ներկաներ, որ կը քաջալերէք ու կը գնահատէք տարուած աշխատանքը, օժանդակելով թատրոնի զարգացման:

ուեցան այնպիսի սերտ կապեր որոնք մինչեւ օրս կը մնան ամուր եւ անքատկելի:

Երբ Հ.Բ.Ը. Միութեան «Արտաւազը» թատերախումբը հիմնեցինք 1979 թուականին, Հայկ Մարտիանին եւ Բարսեղ Գարթաւեանին հետ, հաւատք եւ յոյս ունէինք որ նորակազմ թատերախումբը պիտի գոյատեւէր գոնէ քանի մը տարիներ: Սակայն մտքիս ծայրէն իսկ չէր անցներ որ երեսուն տարիներ յետոյ այս գեղեցիկ սրահին մէջ հաւաքուած պիտի սօսախմբէին անոր երեսունամեայ յոբելեանը:

Այս մեծ յաջողութիւնը կը պարտինք թատերախումբին շարքերէն անցած 55 վարչական անդամներուն, 174 թէքնիք աշխատողներուն եւ 202 դերասաններուն անսակարկ նուիրումին, տքնաջան աշխատանքին եւ անխախտելի հաւատքին: Այսօր կարելի չէ այդ բոլոր հաւատաւորներուն անունները յիշել: Անոնք յիշատակութեան պիտի արժանանան յուշամատենի մը մէջ որ 30 ամեակի առթիւ պիտի հրատարակուի գալիք տարուան սկիզբները:

Այս սակայական աշխատանքին իրենց նպաստը բերին հայ մամուլը, հայ դպրոցները, մեր բարերարները, յայտագրի ծանու-

### «ԱՐՏԱԻԱԶԴ» ԹԱՏԵՐԱԽՈՒՄԻ ԱՐԺԵՑՈՒՑ ԻՐ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 30..ԱՄԵԱԿԸ

Շարունակուած էջ 8-էն

եանի (յետ Մահու), Նայրիի Փարթամեանի եւ Անի Տօնիկեանի անունները:

Սիլվա Նազարէթեան յիշատակեց անունները, դերակատարներ Լենա Գարակէօզեանին, Արմէն Գերասիմեանին, Վարուժան Վարժապետեանին, Վարդուհի Գոճայեանին, Մարօ Աճէմեանին եւ Հրաչ Աճէմեանին, որոնք բեմ ելած էին տասէ աւելի ներկայացուցներու մէջ:

Աստղիկ Խանճեան, որ յիշատակեց թէքնիք բաժնի մէջ գործողներ՝ Ադամ Ալվազեանին, Արա Ֆէրմանեանին, Ճէզ Խուրշիտեանին, Մատլէն Սաթամեանին եւ Ռաֆֆի Պոյաճեանին անունները, որոնց ներդրումը մեծապէս գնահատելի եղած են թատերախումբը յաջողութեան մէջ:

Անի Իմաստունեան, յիշատակեց անունները միութենական աշխատանքները «սահուն կերպով հունաւորող տեսլականի տէր ատենապետներ՝ Վահրամ Իշլեմեանի, Ադամ Ալվազեանի, Ալէք էքմէքճեանի, Վահէ Իմաստունեանի եւ Արա Պապայեանի :

Տօքթ. Գրիգոր Սիմոնեան գնահատութեամբ յիշատակեց «Արտաւազը» թատերախումբի գեղարուեստական ղեկավարներ՝ Ժիրայր Փափագեանի, եւ ներկայիս, Գրիգոր Սաթամեանի անունները: Տօքթ. Սիմոնեան յիշատակեց նաեւ, հիւր բեմադրիչներ՝ Մհեր Մկրտիչեանի, Պերճ Ֆալլեանի, բազմամեայ դերասաններ Սիրվարդ Ֆալլեանի, Գէորգ Սողոմոնեանի, Զաւէն Գալուստեանի եւ վեթերան դերասաններ՝ Պաք Գարգարթաւեանի, Մակտա Յարուլթի եւ Վահէ Պէրպէրեանի անունները:

Վարդուհի Գազանճեան, կարողալէ ետք երբեմնի բեմադրիչներէն Փարիզ հաստատուած Ժիրայր Փափագեանի յատուկ «Արտաւազը» ի 30..ամեակին հասցէագրուած շնորհաւորական եւ ներբողական գիրը, յուզումնախառն շեշտով ոգեկոչեց յետ մահու՝ «Արտաւազը» թատերախումբի մեծ ընտանիքէն առ յաւիտ բաժնուող անդամներուն յիշատակը: Անոնք են՝ Անի Աճէմեան, Վազգէն Եղաճեան, Յարութիւն Գաբրիէլեան, Լուլու Ֆերմանեան, Սագո Տատուրեան եւ Միրէյ Գալֆայեան:

Տիկ. Գազանճեան խնդրեց ներկաներէն, մէկ վայրկեան յտնկայս, յարգել անոնց յիշատակը: Այնուհետեւ ելոյթ ունեցաւ օրուան գլխաւոր բանախօս ծա-

նօթ հրապարակագիր, Սարգիս Մինասեան, որ իր ելոյթին մէջ, ընդգծելէ ետք թատրոնի հասարակական բոլոր խաւերուն սրտի խօսող եւ մատչելի գեղարուեստական մարզը ըլլալու իրողութիւնը, անդրադարձաւ «Արտաւազը» թատերախումբի կազմութեան պատմական հանգրուաններուն վրայ, կատարեց անոր հետ առնչուած քանի մը գնահատականներ, որոնք կը վերաբերին Հ.Բ.Ը.Մ.ի «Արտաւազը» ին ցուցաբերած թիկունքին, դերասաններու նուիրումին եւ բեմադրիչներու գոհողութեան ոգիին: Յարգելի բանախօսը «անխափան նոր երթ մաղթեց «Արտաւազը» թատերախումբին:»

«Արտաւազը» ի դերասանուհիներէն Օր. Արփի Սամուէլ-



եան, դաշնամուրային կատարողութեամբ, խորը իմացութեամբ եւ ապրումով, նուազեց Արամ խաչատուրեանի թոքաթան, որ արժանացաւ հանդիսատեսներու բուռն ծափահարութեան:

Նախքան գնահատականներու տուչութիւնը եւ «Արտաւազը» թատերախումբի բոլորած 30..ամեայ գործունէութեան տեսանկյանի ցուցադրութիւնը, շնորհաւորական եւ գնահատական համառօտ խօսքով ելոյթ ունեցաւ Հ.Բ.Ը.Մ.ի հարաւային Գալիֆորնիոյ Շրջանակային Յանձնաժողովի ատենապետ Տիար Պերճ Շահագեան: Հանդիսութեան աւարտին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, Պոյաճեան սրահին մէջ, ուր տեղի ունեցան շնորհաւորութիւններ:

«Մասիս» շաբաթաթերթ, ջերմօրէն կը շնորհաւորէ «Արտաւազը» թատերախումբի հիմնադրութեան 30..րդ տարեդարձը եւ կը մաղթէ նորանոր յաջողութիւններ՝ իր մշակած ազգային, հայրենասիրական եւ թատերական նուիրական աշխատանքներուն մէջ:

ցողները եւ մանաւանդ դուք սիրելի հանդիսատեսներ որ ձեր ներկայութեամբ նիւթապէս եւ բարոյապէս նպաստեցիք այս թատերախումբի յաջողութեան ու վերելքին:

Տակաւին մեր գործը չենք վերջացուցած: Թատերախումբին սկսած են միանալ հրաշք երիտասարդ երիտասարդուհիներ, որոնք այս երկրին մէջ ծնած ըլլալով հանդերձ, կը խօսին սահուն հայերէն եւ արդէն իսկ վեթերան դերասաններու կողքին կը մասնակցին թատերախումբի բեմադրութիւններուն, նոյնիսկ ստանձնելով գլխաւոր դերեր: Անոնք այս թա-

տերախումբի ապագայի ջահակիրներն են:

Իմ խորին շնորհակալութիւններս ձեր բոլորին անխախտ: Մեծ յոյսով ենք որ երեսուն տարի վերջ փառաւոր շուքով պիտի սօսախմբուի Հ.Բ.Ը.Մ.ի «Արտաւազը» թատերախումբի 60 ամեակը: Մինչ այդ շարունակենք նեցուկ կանգնիլ թատերախումբի գործունէութիւններուն ի շահ Հայ թատրոնի գոյատեւման ու հայ մշակոյթի զարգացման:

Փառք ու պատիւ «Արտաւազը» թատերախումբի բոլոր երկրպագուներուն ու երախտաւորներուն:



### «ՍԻՓԱՆ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲԸ ԵՐԵՍՈՒՆ ՏԱՐԵԿԱՆ

Շարունակում է 7-էն

սին լինելն էր, մէկտեղուելը՝ Բարեգործականի կենտրոնում՝ իսկ այսօր, փոքր-ինչ ամբել է կարծէք այդ կարօտը՝ հայրենիք-սփիւռք՝ երբեմն չարգարացող, մշակութային կապերի եւ գերժամանակակից այլեւայլ միջոցների պատճառով:

1982 թուականից սկսեալ, «Սարդարապատ» համոյթի համերգներից գատ, «Սիփան» որն անուանուեց Սրբազան Համերգ:

Համերգների այդ շարքում ոգեկոչում էր ոչ միայն Մեծ Եղեռնի զոհերի յիշատակը, այլև մեր օրերի փոթորկալից դէպքերին զոհ գնացած Պաքուհի, Սոււկայիթի եւ Ղարաբաղի զոհերի յիշատակը:

«Սիփան» երգչախմբի «Սրբազան Համերգ»ների շարքում առանձնակի փայլով ու կատարողական մեծ վարպետութեամբ են անցել 1982-84 թուականների համերգները, որոնց յայտագրերում իրենց մասնագիտական հզոր տաղանդն են ցուցադրել երգչուհիներ Մարետա Անասեանը, վաղամեռի Ալիս Լոմեանը, Հերմինէ Ամիրեանը, Չուսկահար Արմէն Անասեանը, երգիչներ Յակոբ Թօփուզեանը, Հենրիկ Միհրանեանը եւ Արամ Անասեանը:

Յայտագրի բնոյթին համապատասխան գրական նիւթն են մատուցել տաղանդաւոր դերասան-ասմուկներ Շաքէ Թուխմանեանը, Նունէ Աւետիսեանը, Յարութիւն Ֆոգուլեանը, Ժիրայր Փափազեանը, Գիրգոր Օգարեանը:

Ահա մի քանի տող, այդ տարիներին «Ասպարէզ» թերթին թղթակցող Հիլտա Փիլիպոսեանի յօդուածից՝ սպազորուած թերթի 1988 թ. Մայիսի 10-ի համարում.

- Այս համերգը աւելի մեծ պրոպագանդ էր, քան տասը հազարանոց ցուցը... - Ի՞նչն էր հիմնականը Անասեանի համերգում, ի՞նչ միջոցներով տաղանդաւոր երաժիշտը կարողացաւ գերել հասարակութեանը, երկու ժամ անընդատ նրան գամելով աթոռներին: Նախ՝ օրուայ խորհուրդը ու իմաստը, որ տեւաբար իշխում էր ողջ երեկոյի ընթացքում: Երկրորդ՝ լաւագոյնս ընտրուած յայտագիրը՝ ու կատարողների բարձր, անթերի մեկնաբանումը:

«Սրբազան Համերգ»ների շարքի հետ «Սիփան»ը շարունակեց նորանոր ծրագրային համերգներով աշխուժացնել տակաւ առ տակաւ աշխուժացող Լոս Անճելլոսի մշակութային կեանքը.

- Այսպէս.
- Յոյսի, հաւատի, յողթանակի երգեր:
- Հայաստանը երգերի մէջ:
- Ոգեկոչման համերգ:
- Հայրենի երկնքի տակ:
- Թումանեանը երգերի մէջ:
- Թաթուլ Ալթունեան:
- Յիշատակի համերգ՝ նուիրուած Խաչատուր Աւետիսեանի յիշատակին:
- Ղարաբաղին նուիրուած ազգային-հայրենասիրական երգեր:

Երգչախմբի համերգային ծրագրերում ընդգրկուել են յայտնի մենակատարներ: Երգչուհիներ՝ Աննա Նշանեանը, էլլատա Չախոյեանը, Մարիա Մայիլեանը, Մարիետա Անասեանը, սեւամորթ օպերային երգչուհի Քարմելա Չոնսը, Մարո ֓արթամեանը, Ադրինէ Մելիքեանը, երգիչներ՝ Ռազմիկ Մանսուրեանը, Յակոբ Թօփուզեանը, հրեայ երգիչ Եուրի Էդելմանը, Յովիկ Գրիգորեանը, եւ ուրիշներ:

«Սիփան» երգչախմբի վար-

չութիւնն ու բոլոր անդամները այսօր իրենց շնորհակալութիւնն են յայտնում բոլոր նրանց, ովքեր 1978-79 թուականներին հիմը դրին «Սիփան» երգչախմբի, որը անասկարկ նուիրումով 30 տարի փառայեղ գործունէութիւն է ծաւալում Սփիւռքում ու Մայր Հայրենիքում: Ահա նրանք.

Մանիկ Մանուէլեան, Գոհար Սեմերճեան, Անահիտ Հաճիմկրեան, Մէրի Մուշոյեան, Նէլլի Կնատրալեան, Ժողէֆին Դալեան, Մարա եւ Սամուէլ Կոպալեաններ, Անահիտ Մուկոյեան, Անահիտ Թաթուլեան, Վիկթորիա Սիմիճեան, Աստղիկ Յովսէփեան, Վերգինէ Քէչէկեան, Ժիրայր Դէղէյեան, Վարդ Գրեւակուրեան, Սարգիս Նահապետեան, Շահէն Մկրտչեան, Մինաս Նազարեան, Հրաչեայ Ասատրեան, Յակոբ Թաթուլեան, Զինի Քարամալ, Վարդուհի Աւագեան:

Աւելի քան քսան տարի «Սիփան» երգչախմբին անդաւանձան ծառայել է տարանդաւոր դաշնակահար, նախկինում Երեւանի օպերային թատրոնի դիրիժոր Լեւոն Աբրահամեանը:

Երգչախմբի աշխատանքները էլ աւելի արդիւնաւէտ դարձնելու համար, ահա արդէն քանի ամիս է Սիփանին է միացել Երեւանի օպերային թատրոնի նախկին խմբավար Սամուէլ Վարոսեանը, որի մասնագիտական փորձը զգալիօրէն թեթեւացնում է գեղարուեստական ղեկավարի՝ առանց այն էլ գերծանրաբեռնուած վիճակը:

«Սիփան» երգչախմբի վարչական կազմում ներգրաւուած են ժամանակի ընթացքում կազմակերպչական զգալի փորձ ձեռք բերած ատենապետ Բաֆֆի Թորոսեանն ու փոխատենապետ Նուշէ Բանջարեանը:

«Սիփան» երգչախումբը սփիւռքի միակ կոլեկտիւն է, որ երեք անգամ հիւրընկալուել է մայր հայրենիքում, ( 1990, 1991, 97 թ.թ.):

Երեսուց տարուայ ընթացքում «Սիփան» երգչախմբի յայտագրերում տեղ գտած ստեղծագործութիւնների հիմնական մասը եղել են Հենրիկ Անասեանի հեղինակութիւններուն մշակումները:

«Սարդարապատ»ից գատուելուց յետոյ երգչախումբը ելույթներ է ունեցել միմիայն սիմֆոնիկ նուագխմբի հետ:

«Սիփան» երգչախումբը սփիւռքի միակ խումբն է, որ իրականացրել է Արմէն Տիգրանեանի «Դաւիթ Բէկ» օպերայի համերգային կատարումը: Երգչախումբը իրականացրել է նաեւ անմահ կոմպոզիտորի «Անուշ» օպերայի համերգային կատարումը:

Անցեալ դարի վերջերից «Սիփան» երգչախումբը համագործակցել է Արա եւ Լիլիա Մելքոնեանների պարախմբի հետ: Երկու խմբերի, ինչպէս նաեւ ժողգործիքների համոյթի միացումով ստեղծուեց մի նոր երգի-պարի համոյթ՝ Սիփան անուանով:

Մի քանի տարի շարունակ, «Սիփան» երգի-պարի համոյթը ելույթներ է ունեցել Լոս Անճելլոսի տարբեր համերգասրահներում:

«Սիփան» երգչախումբը մի կուռ, ամփոփ, համերաշխ կոլեկտիւ է, իսկական ըտանիք, որի գործունէութեան մէջ բացառուում են թիւրմացութիւնները: Մէկը-միւսին օգնող, մէկը-միւսին հասնող, յաջողութիւնները, ուրախութիւնները, ինչո՞ւ է, նաեւ տիրութիւնները իրար հետ կիսող իսկական հայրողիներ են սփիանցիները:

### Յ.Բ.Ը.Մ.Ի ԱԼԵՔ ԵՒ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՔԱՌԱՍՆԱՄԵԱԿԸ

Շարունակում է 13-էն

ըոյթի հայ համայնքին իրենց նեցուկին եւ օժանդակութեան համար: Պրն. Քիւրքեան ապա բեմ հրաւիրեց հոգաբարձութեան ժրջան ատենապետ դոկտ. Ռիչըրտ Մարպըրըըը ներկայցնելու իր խօսքը:

Դոկտ. Մարպըրըըը նախ ողջունեց ներկայութիւնը բարերար Տէր եւ Տիկ. Ռիչըրտ Մանուկեանին, որ իր քրոջ՝ Լուիզ Սիմոնին հետ միասին կարելի դարձուցրէր էր արդիական բոլոր պայմանները գոհացնող դպրոցաշէնք մը ունենալու համայնքին երազը: Ապա ատենապետը շնորհակալութիւն յայտնեց ներկայ ու անցեալ բոլոր տնօրէններուն եւ ուսուցչական կազմերուն իրենց նուիրումին ու աշխատանքին համար:

Յաջորդ խօսք առնողը երկրորդական վարժարանի ժրջան տնօրէն դոկտ. Յովսէփ Թորոսեանն էր: Ան խոստացաւ ջանք չիւնայաւել երկրորդական վարժարանի այժմու ուսումնական նախանձելի արդիւնքները գերազանցելու, բարձր պահելով հանգուցեալ բարերարներ Ալեք եւ Մարի Մանուկեաններուն անունը: Տնօրէնը հպարտութեամբ նշեց որ 12րդ դասարանի 28 աշակերտները արդէն իսկ հաւաքաբար ձեռք ձգած են 400,000 տոլար համալսարանական կրթանպաստներ, ինչ որ վկայութիւնն էր անոնց բարձր նիշերու եւ դպրոցիս ունեցած բարձր վարկին:

Տնօրէն դոկտ. Թորոսեանէն ետք սրտի խօսքով ելույթ ունեցաւ Սաութֆիլտի քաղաքապետուհի Պրենտա Լորընս, որ իր գոհունակութիւնը փոխանցեց այս շրջանին մէջ ունենալու Մանուկեան վարժարանի նման յաջող կրթական հաստատութիւն մը:

Հանդիսավար պրն. Քիւրքեան խօսափողը փոխանցեց Հ.Բ.Ը. Միւլթեան Կեդրոնական Վարչութեան կրթական Բաժնի տնօրէն պրն. Արթուն Համալեանին, որ իր կարգին ներկայացուց Հ.Բ.Ը.Մ.ի նախագահ պրն. Պրեմ Սեդրակեանի շնորհաւորական խօսքը եւ այս կապացութեամբ նախագահին յղած ուղերձը:

Շնորհաւորական ջերմ խօսքով հանդէս եկաւ նաեւ վարժարանիս հովանաւոր, Միշիկընի Կեդրոնական Համալսարանի Չարթըր դպրոցներու պատասխանատու պրն. ձէյմս Կաննըրը: Ան նոյնպէս դրուատեց Մանուկեան վարժարանի ձեռքբերումները, նշելով որ տնօրէն Թորոսեան իր դոկտորականը Միշիկընի Կեդրոնական Համալսարանէն ստանալէ ետք, տնօրնութեան կողքին այժմ կը դասաւանդէ նաեւ նոյն համալսարանէն ներս:

Պրն. Քիւրքեան ապա բեմ

հրաւիրեց վարժարանիս երկարամեայ նախկին ուսուցչուհի եւ այժմ, Նախակրթարանի ու Միջնակարգի տնօրէնուհի օրդ. Տայանա Գրզըլեանը: Օրդ. Գրզըլեան նախ շնորհակալութիւն յայտնեց բարերարներ պրն. Ռիչըրտ Մանուկեանին ու տիկ. Լուիզ Սիմոնին որոնք իրենց ծնողքին՝ Ալեք եւ Մարի Մանուկեանի մահուընէ ետք նիւթապէս թէ բարոյապէս նեցուկ կը կանգնին այս կրթական հաստատութեան: Ապա տնօրէնուհին շնորհակալութիւն յայտնեց այս ձեռնարկի կազմակերպիչ յանձնախումբին յանձինս՝ Լինտա Տէրեան-Գարիպեանին, Սոնա Գալֆայեանին, Մոնա Քիւրքեանին, Սիլվա Սաղրեանին, Սիլվա Սեմերճեանին, Սիրան Չոլաքեանին, Շոդիկ Թորոսեանին, Անի Գասպարեանին, որ իր հետ միասին ջանք չէին խնայած այս միջոցառումը կազմակերպելու համար: Ապա ան հրաւիրեց դպրոցիս նախկին տնօրէնները նաեւ քառասուն տարի առաջ դպրոցիս բացման ժամանակ գործող երկու ուսուցչուհիները, որ այդ օր ներկայ էին, գալու բեմ եւ ստանալու յուշատախտակներ: Ապա օրդ. Գրզըլեան բեմ հրաւիրեց դպրոցիս հոգաբարձութեան երկարամեայ փոխ ատենապետ տիար Երուանդ Ազատեանը իր քառասնամեայ անխոնջ ու նուիրեալ ծառայութեան համար ստանալու յատուկ յուշատախտակ:

Պրն. Ազատեանին համար անակնկալ էր այս պատիւը. ան զգացուած շնորհակալութիւն յայտնեց եւ նշեց որ իր համար հաճոյք եղած է ծառայել այս կրթական հիմնարկին

Վերջապէս բեմը տրամադրուեցաւ բարերար տիար Ռիչըրտ Մանուկեանին: Բարերարը խորին ակնածանքով յիշեց իր ծնողքը Ալեք եւ Մարի Մանուկեանները, որոնց սրտին շատ մօտիկ էր Մանուկեան վարժարանը: Անոնք բաց չէին թողել վարժարանի որեւէ ձեռնարկ կամ վկայականաց բաշխման հանդիսութիւն: Պրն. Մանուկեան այս գեղակերտ կառույցը նուէր համարեց իր քրոջ եւ իր կողմէն, ի յիշատակ իրենց ծնողներուն: Ան դրուատեց իրարայջորդ հոգաբարձական կազմերու եւ տնօրէններու աշխատանքը, որոնց շնորհիւ ալ այս վարժարանը ձեռք ձգած էր յարգանք ու մեծ վարկ:

Հանդիսութեան պաշտօնական մասը աւարտեցաւ Տ. Տիրան Քհնյ. Փափազեանի աղօթքով, որմէ ետք խանդավառ երգն ու տոհմիկ պարը տիրապետող էին միւսիչեւ առաւօտունէ ժամերը, Մոնթրէալէն յատուկ հրաւիրուած երգիչ Արթուր Աբգարեանի ու իր խումբին նուագակցութեամբ:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՀ ՓԱՍՍՏԻՆԱՅԻ ՄԷՉ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)**

**ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ 1060 N. ALLEN AVE. PASADENA**

**ՀԵՌԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680**



### ՄԱՐԱԶԴ



**ՍԱՄՈՒԷԼ ՇԻՇՄԱՆԻԱՆ**  
1932-2009

Սրտի դառն կսկիծով կը գուժենք մահը մեր սիրեցեալ ամուսնոյն, հօր եւ մեծ հօր ՍԱՄՈՒԷԼ ՇԻՇՄԱՆԻԱՆԻ, որ պատահեցաւ Ուրբաթ, 30 Հոկտեմբեր, 2009ին, յետ երկարատեւ հիւանդութեան:

Հանգուցեալի յուղարկւորութիւնը տեղի պիտի ունենայ, Հինշաբթի, 5 Նոյեմբերին, 2009, կէսօրուան ժամը 12ին Hollywood Hills Forest Lawn գերեզմանատան Կարմիր եկեղեցւոյ մէջ եւ ապա թաղումը՝ նոյն գերեզմանատունը:

- Սգակիրներ՝ Այրին՝ Սառա Սաղրեան-Շիշմանեան եւ զաւակները
- Քոյրը՝ Աղանի Կարապետեան
- Դուստրը՝ Թագուհի եւ Սարգիս Գրնապլեան եւ զաւակները
- Քրոջ զաւակները Պերճ, Արմէն եւ Պերճուհի Կարապետեան եւ զաւակները
- Ատրիան, Սաղրեան եւ զաւակները
- Եւ համայն Սաղրեան, Շիշմանեան, Կարապետեան, Շիրինեան, Գրնապլեան, Մելգոնեան ընտանիքներ եւ հարազատներ:
- Փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կը խնդրուի կատարել Հայաստանի տարեցներու եւ որբերու ընկերակցութեան կամ Samuel Shishmanian Memorial Fund
- c/o Mrs. Sara Sagherian
- 10718 Swinton Avenue
- Granada Hills, CA 91344

### ՇՈՒԿԵՐԱՆԳԻՍ



**ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՄԱԼԵԱՆ**

ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՄԱԼԵԱՆԻ մահուան քառասունքին առիթով Կիրակի, 8 Նոյեմբեր, 2009ին յաւարտ Ս. Պատարագի հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ:

### ԻՐԱՆԱՅԱՅ ԳԱՂԹՕՃԱԽԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ ԵՐԵԿ ԵՒ ԱՅՍՕՐ

Շարունակուած էջ 16-էն

պէս կարգադրում էր Սպահանի պետական համալսարանում հիմնել նաեւ հայագիտական համալսարան, որն եզակի կրթական մի օճախ է սփիւռքում: Ի դէպ, այս տարի լրացաւ Սպահանի հայագիտական համալսարանի հիմնադրման 50-ամեակը: Հայագիտական ունէր փառաւոր մի շէնք: 1970 թուին Նոր Զուղա է այցելում Գ. Գիւլբէնգեան հաստատութեան վարիչը, արձակագիր Վահրամ Մալեանի հետ: Այդ հաստատութիւնը որոշում է հայագիտականի համար կառուցել հայկական ոճով մի փառաւոր շէնք, իր լսարաններով, գրադարաններով ու բոլոր անհրաժեշտ յարմարանքով: Հայագիտականը այսօր ունի 104 ուսանող, որոնց մէջ կան մեծ թուով պարսիկներ. համասարանը ցարդ տուել է շուրջ 250 շրջանաւարտներ, որոնցից մի զգալի մասը պաշտօնավարում է իրանի եւ սփիւռքի տարբեր երկրների հայկական դպրոցներում:

Իրանահայութիւնը ունի հարուստ գրականութիւն եւ անուանի գրողներ: Պարսկաստանից են - ինչպէս նշուեց - Ռաֆֆին, Չարենցը, ամերիկաբնակ (այժմ հանգուցեալ) Յակոբ Կարապետեանը, Լուսիկ Մելիքեանը, Հեղինէ Դալթեանը, Արմանտը:

Հայաստանում ստեղծագործողներ՝ Գեղամ Սարեանը, Արիգ Աւագեանը, Յովհաննէս Ղուկասեանը պարսկահայ ծագում ունեն:

Իրանահայ երէկուայ եւ այսօրուայ գրողների եւ բանաստեղծների շարքին պիտի յիշել՝ Արամ Գառօնէ, Արշի, Լեւոն Բզնունի, Եղիա Հայկեան, Գէորգ Դարֆի, Ոստանիկ, Հայգալ, Սիրաք Բեդլին, Ժորժ Բաբայեան, Յովհաննէս Մարդ, Շնորհալի թարգմանիչներ Աշոտ Մինասեան, Ալէք Խաչատրեան, Հրանդ Ղուկասեան, Խաչիկ Խաչեր:

Այսօր իրանահայ գրականութեան նահապետն է արձակագիր Անդրանիկ Սարեանը: Այսօր շարունակում են ստեղծագործել Վարանդը, Ալմինը, Վահէ Արմէնը, Տիգրան Պողոսեանը, էլյո Գարեանը, Փանոս Վարդանեանը, Ծաղկանուշ Ծատուրեանը, Սաթօ Ա-ն, Սեդա Աղամեանը, Լորիկ Սիմրոշեանը, Կոլիա Տէր Յովհաննիսեանը, Նազար Շահվերդեանը, Խաչիկ Խաչերը, Յովիկ էրզարեանը, Լէոնիդ Մարվարեանը, Նորվանը եւ Սեդա Ալւանդ-

եանը:

Տաղանդաւոր բանաստեղծ եւ հմուտ թարգմանիչ է Ազատ Մաթեանը, որն Սպահանի հայագիտական համալսարանի տեսուչն էր երկար տարիներ:

Իրանում գրականութեամբ զբաղուողների շարքը երկար է, չէմ ուզում բոլորը թուել, հայցելով նրանց ներողամտութիւնը:

Այստեղ ուզում են յիշել պարսիկ հայագէտ եւ բանաստեղծ Ահմեդ Նաուրիզադէին: Նա եղել է չքաւոր ընտանիքի զաւակ: Ծնուել է Անգալի քաղաքում, Կասպից ծովքին կից: Ամբան ամիսներին այդ քաղաքում են հանգստացել գրողներ՝ Արշի, Գալուստ Խանենցը եւ Արամ Գառօնէն: Եօթը տարեկան Ահմեդը շփուել է հայ գրողների հետ, եւ Լուսիկը հայերէն խօսել, գրել ու կարդալ: Ապա անցնելով Թեհրան, Գ. Խանենցի քաջալերանքով մեկնել է Սպահան եւ որպէս ազատ ունկնդիր, 2 տարի մասնակցել է հայագիտական իսլամաբանութեան: Այնուհետեւ մեկնել է Հայաստան եւ հետեւել հայ գրականութեան համալսարանի դասերին, որպէս ազատ ունկնդիր: Մասնագիտանալով հայոց լեզուի մէջ, գալիս է իրան եւ հրատարակում է «Հարիւր տարի հայ բանաստեղծութիւն» անուամբ մի գիրք, 800 էջից բաղկացած, որտեղ թարգմանում է հայ շուրջ 80 գրողների գործերը: Ապա գրում է «Հայ ժողովուրդի պատմութիւն» հատորը, իսկ վերջերս լոյս ընծայեց 17 հայ գրողների կարճ պատմուածքները անուանելով «Խնձորի այգին» (Ստեփան Չորեան): Իրանահայ գրականութեան ասպարէզում եզակի մի դէմք է Ահմեդ Նուրիզադէն: Թարգմանական յաջող եւ օգտակար գործ է կատարում անուանի թարգմանիչ Խաչիկ Խաչերը:

Նախքան աւարտը ուզում եմ նշել շնորհալի հայուհի Ալիս Նաւասարեանի անունը, որն իր սեփական միջոցներով եւ երկար տարիների պրպտումներով, հրատարակեց 2 հոյակապ գիրք-ալբոմ, մեծադիր, գունաւոր էջերով: Առաջինը իր մէջ պարփակում է շուրջ 50 իրանահայ նկարիչների գործերը, իսկ միւսը՝ «Հայ բեմի կին նուիրեալները»: Երկուսն էլ հոյակապ եւ բացառիկ հրատարակութիւններ են:

Ահա այս էր իրանահայ գաղթօճախի մշակութային երէկուայ եւ այսօրուայ պատկերը:

# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

\* \$50,00 for USA

\* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.

\* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel :----- Fax :-----

## ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

**PALM SPRINGS ԱՐՉԱԿՈՒՐԴԻ ԳԼԱՑՈՂ ԳԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ**

Փալմ Սփրինգս գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թեմիսի խաղաղաշտ, կանաչագարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ պապահովութեան սիստեմ:

Մանրամասների համար հեռաձայնել՝

**(818) 246-0125**

- Վարձման գներն են՝
- Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝ \$ 400
- Long Weekend-ների համար՝ \$ 500
- Մէկ շաբաթուայ համար՝ \$ 675
- Մէկ ամսուայ համար՝ \$ 1450



1 2 t h I n t e r n a t i o n a l

Armenia Fund

# Teleton 2009

November 26, 2009 Thanksgiving Day

# OUR SHUSHI



OUR SHUSHI  
TELETHON 2009

©2009-Armenia Fund, Teleton 2009 official Logo



**KSCI CHANNEL 18 8am-8pm PST**

Check your local TV listings or

Call **1-800-888-8897** • *Coast-to-coast live broadcast* • Webcast [www.armeniasfund.org](http://www.armeniasfund.org)

Logo & English Design by G.S. Baklan